



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐ**

« \_\_\_\_\_ 2015թ.

N \_\_\_\_\_

**ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ  
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ  
ՊԱՐՈՆ Ա. ԵՐԻՑՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Երիցյան**

Ի կատարումն ՀՀ վարչապետի 2015 թվականի մարտի 10-ի ««Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N198-Ա որոշման հավելվածի 2-րդ կետի՝ Ձեր քննարկմանն է ներկայացվում ՀՀ կառավարության «Խնամքի տրամադրման կարգը և պայմանները սահմանելու մասին» որոշման նախագիծը, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերը:

Կից՝ 51 էջ:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ**

**Ա. ԱՍԱՏՐՅԱՆ**

կատ. սոցիալական աջակցության վարչություն  
հեռ. 560252

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30  
<http://www.mlsa.am> [info@mlsa.am](mailto:info@mlsa.am)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

«\_\_\_» «\_\_\_\_\_» 2015 թվականի N -----Ն

**ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ  
ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 12-րդ մասի և 30-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել՝

1) երեխաների խնամքի տրամադրման կարգն ու պայմանները՝ համաձայն N1 հավելվածի.

2) տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը և պայմանները՝ համաձայն N2 հավելվածի.

3) տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը՝ համաձայն N3 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 9-ի «Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունում (մանկատուն, գիշերօթիկ) երեխաների տեղավորման կարգը հաստատելու մասին» N 1735-Ն որոշումը.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 7-ի «Երեխաներին ցերեկային խնամք տրամադրելու կարգը հաստատելու մասին» N 1877-Ն որոշումը.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 7-ի «Ծեր և հաշմանդամություն ունեցող քաղաքացիներին խնամքի տրամադրման կարգն ու ձեր և հաշմանդամություն ունեցող քաղաքացիներին խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու մասին» N 1874-Ն որոշումը:

3. Սահմանել, որ սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվան նախորդող օրվա դրությամբ սույն որոշման 1-ին կետում նշված անձանց խնամք տրամադրող կազմակերպությունները, մինչև սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեության հավաստագրման դեպքերը և կարգը սահմանելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված ժամկետը, խնամքը

կարող են տրամադրել առանց տվյալ սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեությունը սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնում հավաստագրելու:

4. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում, համատեղ հաստատել՝

1) բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում և սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններում երեխաների խնամքի տրամադրման բժշկական ժամանակավոր հակացուցումների ցանկը.

2) բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատություններում և տնային պայմաններում խնամքի տրամադրման համար դիմած անձի բժշկական քարտի ձևը:

5. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել՝ ա. տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման համար անհրաժեշտ նվազագույն չափորոշիչները.

բ. երեխաների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ սոցիալական նվազագույն չափորոշիչները.

2) հաստատել՝

ա. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացվող՝ երեխայի խնամքը տրամադրելու մասին եզրակացության, երեխային բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատություն ուղեգրելու վերաբերյալ եզրակացության և բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատությունից երեխայի ծնողների (ծնողի) կամ օրինական այլ ներկայացուցչի գրավոր դիմումի հիման վրա երեխայի դուրս գրման մասին եզրակացության ձևերը.

բ. բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունից երեխայի՝ կենսաբանական ընտանիք վերադառնալու համար տրվող եզրակացության ձևը.

գ. բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատություններում և տնային պայմաններում խնամքի տրամադրման համար դիմած անձի կենսաթոշակի տեսակի և չափի վերաբերյալ տեղեկանքի ձևը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԵՐԵՒԱՆԵՐԻ**  
**ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով կարգավորվում են բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի, հատուկ (մասնագիտացված), խնամքի գիշերօթիկ հաստատություններում ու սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններում երեխաների խնամքի տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի դրույթները չեն տարածվում սոցիալական սպասարկում իրականացնող այլ կազմակերպություններում, կենտրոններում, հիմնարկներում, նախադպրոցական հաստատություններում, պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում երեխաների խնամքի տրամադրման հետ կապված հարաբերությունների վրա, եթե այլ բան սահմանված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

3. Երեխաներին խնամքը տրամադրում են բացառապես տվյալ սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեությունը սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնում (այսուհետ՝ լիազորած մարմին) հավաստագրած, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները (այսուհետ՝ կազմակերպություն), բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի N Ն որոշման 3-րդ կետով սահմանված դեպքի:

4. Խնամքը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխաներին, Հայաստանի Հանրապետությունում բնակվող՝ բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող օտարերկրյա քաղաքացի համարվող երեխաներին, քաղաքացիություն չունեցող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող երեխաներին՝ օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

**II. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**  
**ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԱԾՈՒԹՅԱՆ ՑԵՐԵԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ**  
**ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՔԱՆՋՆԵՐԸ**

5. Բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի, հատուկ (մասնագիտացված), խնամքի գիշերօթիկ հաստատություններում և սոցիալական

հոգաճության ցերեկային կենտրոններում խնամքը կարող է տրամադրվել ինչպես պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո գտնվող կազմակերպության կողմից, այնպես էլ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնվող կազմակերպության կողմից:

6. Բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատություններն ապահովում են երկարաժամկետ կամ որոշակի ժամկետով կացարան, շուրջօրյա լրիվ խնամք «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների (այսուհետ՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ) համար:

7. Բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ (մասնագիտացված) հաստատություններն ապահովում են երկարաժամկետ կամ որոշակի ժամկետով կացարան, շուրջօրյա լրիվ խնամք առանց ծնողական խնամքի մնացած այն երեխաների համար, որոնք ունեն ծանր սահմանափակ կարողություններ՝ կենտրոնական նյարդային համակարգի օրգանական ու ֆունկցիոնալ ախտահարումներ, բնածին և ձեռքբերովի ֆիզիկական և մտավոր արատներ:

8. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո գտնվող՝ բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատություններն ապահովում են երկարաժամկետ կամ որոշակի ժամկետով կացարան, շուրջօրյա լրիվ խնամք ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար:

9. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնվող՝ բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատությունները կարող են խնամք տրամադրել սույն կարգի 8-րդ կետում չնշված այլ երեխաներին՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն կարգով, այլ նորմատիվ իրավական ակտերով և խնամք տրամադրող կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան:

10. Բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատությունները կարող են դասակարգվել ըստ դրանցում խնամք ստացող երեխաների տարիքային խմբերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

11. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները և սոցիալական հոգաճության ցերեկային կենտրոնները պետք է ապահովված լինեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները բավարարող կոմունալ, սանիտարահիգիենիկ և հակահրդեհային անվտանգության անհրաժեշտ պայմաններով, ունենան դասապատրաստման և խմբային աշխատանքների համար նախատեսված սենյակներ, երեխաների տարիքային խմբերի առանձնահատկություններին համապատասխանող անվտանգ և բարեկարգ խաղահրապարակներ և խաղասենյակներ: Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող են սահմանվել բնակչության սոցիալական

պաշտպանության հաստատությունների և սոցիալական հոգաձության ցերեկային կենտրոնների գործունեության համար անհրաժեշտ ընդհանուր և բնակելի մակերեսին, անձնակազմին (աշխատողների քանակին և հաստիքներին), նրանց աշխատանքային պայմաններին, միաժամանակյա խնամք ստացողների առավելագույն քանակին, նրանց տրամադրվող սննդի չափաքանակին, դրա էներգետիկ արժեքին, հագուստի, սպիտակեղենի, կոշիկեղենի, անկողնային և անձնական հիգիենայի պարագաների չափորոշիչներին, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների և սոցիալական հոգաձության ցերեկային կենտրոնների անվտանգության ապահովմանը և այլ պայմաններին ներկայացվող պահանջներ: Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում և սոցիալական հոգաձության ցերեկային կենտրոններում, սույն կետում նշված պայմաններից բացի, պետք է ապահովվեն նաև երեխայի խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ սոցիալական նվազագույն չափորոշիչները:

12. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները և սոցիալական հոգաձության ցերեկային կենտրոնները պետք է ունենան ներքին կարգապահական և (կամ) համակեցության կանոններ (այսուհետ՝ կանոններ)՝ հաստատված խնամք տրամադրող կազմակերպության համապատասխան լիազորություններով օժտված մարմնի (կամ պաշտոնատար անձի) կողմից: Կանոնները կազմակերպության կողմից ենթակա են ներկայացման լիազորած մարմնին՝ տվյալ սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեությունը լիազորած մարմնում հավաստագրելու համար ներկայացվող դիմումին կից:

### **III. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԻՊԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ (ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ) ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՈՒՂԵԳՐՈՒՄԸ**

13. Խնամակալության և հոգաբարձության մարմինները առանց ծնողական խնամքի մնացած երեխաների մասին տեղեկություններ կարող են ստանալ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունից (այսուհետ՝ ոստիկանություն), պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, նախադպրոցական կրթական, հանրակրթական, բժշկական կազմակերպություններից, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններից, այլ իրավաբանական և ֆիզիկական անձանցից, զանգվածային լրատվության միջոցներից և այլ աղբյուրներից:

14. Խնամակալության և հոգաբարձության մարմինը (իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետի անունից խնամակալության և հոգաբարձության մարմիններին վերապահված լիազորություններն իրականացնող՝ Երևանի վարչական շրջանների ղեկավարները) սույն կարգի 13-րդ կետով սահմանված տեղեկատվությունը ստանալուց հետո ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում իրականացնում է իրավիճակի ուսումնասիրություն՝ տեղեկատվությամբ հայտնի դարձած վայրում երեխայի

հայտնաբերման կամ երեխային տեսակցելու նպատակով և ստացած տեղեկատվության հավաստիության դեպքում՝

1) նույն օրը կազմում է երեխայի հայտնաբերման (տեսակցելու) մասին արձանագրություն, կազմակերպում է երեխայի առաջնային բուժզննումը և երեխային անհրաժեշտ օգնության տրամադրումը, ընդ որում, հիվանդության կասկածի կամ անհետաձգելի բժշկական օգնության տրամադրելու անհրաժեշտության դեպքում, խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից անմիջապես կազմակերպվում է երեխային անհրաժեշտ բուժօգնության տրամադրումը,

2) երեք օրվա ընթացքում՝

ա. այդ մասին տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության մարզպետարանին (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանին), բացառությամբ, երբ այդ երեխայի մասին տեղեկատվությունը ստացվել է տվյալ մարզպետարանից (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանից),

բ. այդ մասին տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ երեխայի գտնվելու վայրի տարածքը սպասարկող սոցիալական աջակցության տարածքային գործակալությանը կամ բաժնին (այսուհետ՝ գործակալություն), բացառությամբ, երբ այդ երեխայի մասին տեղեկատվությունը ստացվել է տվյալ գործակալության կողմից,

գ. այդ մասին տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը (այսուհետ՝ ոստիկանություն), եթե անհայտ է երեխայի ծնողների, կամ նրանցից որևէ մեկի կամ միակ ծնողի գտնվելու վայրը կամ անհայտ են երեխայի ծնողները, բացառությամբ, երբ այդ երեխայի մասին տեղեկատվությունը ստացվել է ոստիկանությունից,

դ. իրականացնում է երեխայի կյանքի պայմանների հետազոտությունը, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով իրականացնում է երեխայի սկզբնական հաշվառումը՝ որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխա, կազմակերպում է համապատասխան բժշկական հաստատության կողմից երեխայի բուժզննումը, ապահովում է այդ երեխայի ժամանակավոր (որոշակի ժամկետով) տեղավորումը (այդ թվում՝ բնակչության սոցիալական պաշտպանության համապատասխան հաստատությունում կամ շուրջօրյա լրիվ խնամք տրամադրող այլ կազմակերպությունում), ընդ որում, սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքում երեխային ստացիոնար բժշկական հաստատություն տեղափոխելիս, երեխայի ժամանակավոր տեղավորումն իրականացնում է ստացիոնար բժշկական հաստատությունից երեխայի դուրս գրումից անմիջապես հետո, եթե մինչ այդ չի ապահովվել երեխայի տեղավորման հարցի վերջնական լուծումը:

15. Խնամակալության և հոգաբարձության մարմինն ապահովում է երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությունը մինչև նրա տեղավորման հարցի վերջնական լուծումը (բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն կամ շուրջօրյա լրիվ խնամք տրամադրող այլ կազմակերպություն ընդունվելը կամ խնամատար ընտանիքում տեղավորելը կամ կենսաբանական ընտանիք վերադառնալը, կամ որդեգրումը կամ խնամակալ կամ հոգաբարձու նշանակելը):

16. Երեխայի կյանքի պայմանների հետազոտությունից հետո, բայց ոչ ուշ, քան սույն կարգի 13-րդ կետով սահմանված տեղեկատվությունը ստանալուց հետո յոթօրյա ժամկետում, խնամակալության և հոգաբարձության մարմինը Հայաստանի Հանրապետության մարզպետարան (իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարան) է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) երեխայի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթը (ծննդյան վկայական կամ անձնագիր կամ նույնականացման քարտ)՝ առկայության դեպքում,

2) երեխայի՝ Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ հանդիսանալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունքը հաստատող փաստաթուղթը (կացության քարտը)՝ առկայության դեպքում, իսկ փախստականի կարգավիճակ ունենալու դեպքում՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը՝ առկայության դեպքում,

3) երեխայի հայտնաբերման (տեսակցելու) մասին արձանագրությունը, որում, ի թիվս այլ տեղեկությունների, նշվում են երեխայի անունը, ազգանունը, տարիքը՝ անձը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում, երեխայի հայտնաբերման օրը, ամիսը, տարին և (կամ) փաստացի գտնվելու (վերջին բնակության) վայրը, երեխայի մասին տեղեկատվության տրամադրման աղբյուրը և տեղեկատվությունը տրամադրած անձի (մարմնի) վերաբերյալ տվյալները՝ դրանց առկայության դեպքում, ինչպես նաև երեխայի անհատականացման համար անհրաժեշտ այլ տվյալներ (մագերի, աչքերի գույնը, հասակը, մոտավոր տարիքը)՝ անձը հաստատող փաստաթղթի բացակայության դեպքում,

4) համապատասխան բժշկական հաստատության (հաստատությունների) կողմից տրված՝ երեխայի առողջական վիճակի մասին բժշկական տեղեկանք, ինչպես նաև քաղվածք երեխայի հիվանդության պատմությունից կամ հոգեբուժական դիսպանսերի բժշկական քարտից՝ դրանց առկայության դեպքում,

5) տեղեկանք բնակության վայրից՝ երեխայի ընտանիքի անդամների մասին,

6) բնակչության պետական ռեգիստր վարող մարմնի կողմից տրված տեղեկանք՝ երեխայի հաշվառման հասցեի, իսկ հաշվառման մեջ չգտնվելու դեպքում՝ վերջին կամ նախկին հայտնի հաշվառման հասցեի վերաբերյալ,

7) ծնողների կամ նրանցից յուրաքանչյուրի կամ միակ ծնողի՝

ա. մահվան դեպքում՝ մահվան վկայականը կամ դրա պատճենը,

բ. ծնողական իրավունքից զրկված լինելու դեպքում՝ ծնողական իրավունքից զրկելու մասին դատարանի վճիռը կամ դրա պատճենը, կամ «Դատալեքս» էլեկտրոնային կառավարման և տեղեկությունների տրամադրման հանրային տեղեկատվական համակարգից արտածված՝ տվյալ վճռի օրինակը,

գ. անգործունակ ճանաչված լինելու դեպքում՝ անգործունակ ճանաչելու մասին դատարանի վճիռը կամ դրա պատճենը, կամ «Դատալեքս» էլեկտրոնային կառավարման և տեղեկությունների տրամադրման հանրային տեղեկատվական համակարգից արտածված՝ տվյալ վճռի օրինակը,



դ. անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված լինելու դեպքում՝ անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու մասին դատարանի վճիռը կամ դրա պատճենը, կամ «Դատալեքս» էլեկտրոնային կառավարման և տեղեկությունների տրամադրման հանրային տեղեկատվական համակարգից արտածված՝ տվյալ վճռի օրինակը,

ե. նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը կիրառելու կամ պատիժը ազատագրկման ձևով կրելու դեպքում՝ այդ մասին իրավասու մարմնի կողմից տրված տեղեկանքը,

զ. ստացիոնար բուժման մեջ գտնվելու դեպքում՝ համապատասխան բժշկական հաստատության կողմից տրված տեղեկանքը,

է. ծնողական իրավունքներից ինքնակամ հրաժարվելու և որդեգրության հանձնելու մասին կամահայտնության դեպքում՝ ծնողների (կամ միակ ծնողի) գրավոր հայտարարագիրը՝ վավերացված նոտարի կողմից,

ը. անհայտ լինելու կամ երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից խուսափելու և սույն ենթակետի «է» պարբերությամբ սահմանված հայտարարագիրը չներկայացնելու կամ նրանց գտնվելու վայրն անհայտ լինելու դեպքում՝ այդ մասին խնամակալության և հոգաբարձության մարմնի գրավոր հայտարարությունը,

8) ծնողի կամ երեխայի օրինական այլ ներկայացուցչի անձը և ընտանեկան կարգավիճակը հաստատող փաստաթուղթ (առկայության դեպքում),

9) տեղեկանք դպրոց հաճախելու մասին՝ դպրոցահասակ երեխաների համար,

10) տեղեկանք երեխայի բնակության վայրի շրջապատի համաճարակային վիճակի մասին (բնակության վայրը հայտնի լինելու դեպքում),

11) երեխայի լուսանկար՝ չորս օրինակից:

17. Հայաստանի Հանրապետության մարզպետարանը, (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանը) սույն կարգի 16-րդ կետով սահմանված փաստաթղթերը ստանալուց հետո՝ ոչ ուշ, քան մեկօրյա ժամկետում, դրանք հասցեագրում է մարզպետարանի աշխատակազմի (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի) ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին և գործակալություն:

18. Գործակալությունը սույն կարգի 16-րդ կետով սահմանված փաստաթղթերը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, կատարում է այդ փաստաթղթերի լրիվ, օբյեկտիվ և համակողմանի ուսումնասիրություն, իրականացնում է երեխայի սոցիալական կարիքների գնահատում, կազմում երեխայի անհատական սոցիալական ծրագիրը և ստացված փաստաթղթերի ու տեղեկատվության համադրման, վերլուծության արդյունքում Հայաստանի Հանրապետության մարզպետարանի (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնին ու խնամակալության և հոգաբարձության մարմնին ներկայացնում իր նախնական եզրակացությունը (դիրքորոշումը) երեխայի հետագա խնամքը տրամադրելու (բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն կամ շուրջօրյա լրիվ խնամք տրամադրող այլ կազմակերպություն ընդունելու, կամ խնամատար ընտանիքում տեղավորելու կամ

կենսաբանական ընտանիք վերադարձնելու, կամ որդեգրման հանձնելու կամ խնամակալ կամ հոգաբարձու նշանակելու նպատակահարմարության) վերաբերյալ:

19. Հայաստանի Հանրապետության մարզպետարանի (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը, սույն կարգի 16-րդ կետով սահմանված փաստաթղթերը և գործակալության եզրակացությունը (դիրքորոշումը) ստանալուց հետո՝

1) եռօրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով կազմակերպում է երեխայի տարածքային հաշվառումը՝ որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխա,

2) հնգօրյա ժամկետում, կատարում է այդ փաստաթղթերի լրիվ, օբյեկտիվ և համակողմանի ուսումնասիրություն, իրականացնում է երեխայի կենսապայմանների և սոցիալ-հոգեբանական ուսումնասիրություն և ստացված փաստաթղթերի ու տեղեկատվության համադրման, վերլուծության արդյունքում կազմում եզրակացություն (երկու օրինակից)՝ երեխայի հետագա խնամքը տրամադրելու (բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն կամ շուրջօրյա լրիվ խնամք տրամադրող այլ կազմակերպություն ընդունելու, կամ խնամատար ընտանիքում տեղավորելու կամ կենսաբանական ընտանիք վերադարձնելու, կամ որդեգրման հանձնելու կամ խնամակալ կամ հոգաբարձու նշանակելու նպատակահարմարության) մասին:

20. Սույն կարգի 19-րդ կետով սահմանված եզրակացության կազմումից հետո մեկ օրվա ընթացքում, Հայաստանի Հանրապետության մարզպետարանը (իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանը) դրա մեկ օրինակը ներկայացնում է խնամակալության և հոգաբարձության մարմնին, իսկ մյուս օրինակը և սույն կարգի 16-րդ և 18-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը՝ լիազորած մարմնին:

21. Սույն կարգի 19-րդ կետով սահմանված եզրակացությունը ստանալուց հետո եռօրյա ժամկետում, լիազորած մարմինը՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով իրականացնում է երեխայի կենտրոնացված հաշվառումը՝ նրա վերաբերյալ համապատասխան տվյալները մուտքագրելով առանց ծնողական խնամքի մնացած երեխաների տվյալների կենտրոնացված շտեմարան,

2) երեխային ուղեգրում է բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի կամ հատուկ (մասնագիտացված) հաստատություն՝ հաշվի առնելով սույն կարգի 6-րդ, 7-րդ և 10-րդ կետով սահմանված պահանջները, եթե ներկայացվել է երեխայի հետագա խնամքը բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում տրամադրելու մասին հիմնավորված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանող եզրակացություն:

22. Այն դեպքում, երբ սույն կարգի 19-րդ կետով սահմանված եզրակացությունը օրենսդրորեն հիմնավորված (իրավաչափ) չէ կամ լիազորած մարմնի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ սույն կարգի 16-րդ կետով սահմանված փաստաթղթերից որևէ մեկում առկա են ոչ հավաստի տեղեկություններ, կամ լիազորած մարմինը հիմնավորված չի համարում երեխայի հետագա խնամքը

բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում կազմակերպելու մասին դիրքորոշումը, ապա, սույն կարգի 21-րդ կետով սահմանված ժամկետում, լիազորած մարմինը երեխայի փաստաթղթերը վերադարձնում է Հայաստանի Հանրապետության մարզպետարան (իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարան)՝ տեղեկացնելով փաստաթղթերի վերադարձման պատճառների և լրացուցիչ ուսումնասիրություններ կատարելու անհրաժեշտության վերաբերյալ:

23. Եթե սույն կարգի 19-րդ կետով սահմանված եզրակացությունում առկա է օրենսդրորեն հիմնավորված դիրքորոշում երեխայի հետագա խնամքը բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում չկազմակերպելու վերաբերյալ, ապա լիազորած մարմինը, այն ստանալուց հետո եռօրյա ժամկետում երեխայի փաստաթղթերը վերադարձնում է Հայաստանի Հանրապետության մարզպետարան (իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարան) և այդ մասին տեղեկացնում գործակալությանը: Սույն կետով նախատեսված դեպքում, երեխայի հետագա խնամքի այլ ձևերը (վերադարձ կենսաբանական ընտանիք, որդեգրում, խնամակալի կամ հոգաբարձուի նշանակում, տեղավորում խնամատար ընտանիքում) կազմակերպվում են Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան, իսկ լիազորած մարմինը և գործակալությունը Հայաստանի Հանրապետության օրենքներով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, աջակցում են երեխայի հետագա տեղավորմանը և խնամքի տրամադրմանը՝ առաջնորդվելով երեխայի իրավունքների և շահերի առաջնային պաշտպանությունն ապահովելու սկզբունքով:

#### **IV. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԻՊԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ (ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ) ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ**

24. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները կազմակերպում են այնտեղ բնակվող (խնամվող) երեխաների՝

- 1) առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը.
- 2) սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրումը.
- 3) իրավական խորհրդատվության տրամադրումը.
- 4) պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով ապահովումը.
- 5) բժշկասոցիալական փորձաքննությունը.
- 6) հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություն ուղեգրելը.
- 7) ազատ ժամանցը.
- 8) կրթաուսումնական կամ ուսումնադաստիարակչական ծառայությունները.
- 9) աշխատանքային թերապիան՝ 16 տարեկանից բարձր երեխաների համար:

25. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները այնտեղ բնակվող (խնամվող) երեխաներին տրամադրում են՝

1) առողջ, անհրաժեշտ քանակի և տարիքին համապատասխան սնունդ, ընդ որում՝ բժշկի գրավոր ցուցումով հատուկ սննդակարգի կարիք ունեցող երեխաների համար նշանակվում է դիետիկ սնունդ, իսկ հիվանդ, թերսնվող և գերսնվող երեխաների նկատմամբ ապահովվում է անհատական մոտեցում,

2) մահճակալ և անհրաժեշտ այլ կահույք.

3) հագուստ, սպիտակեղեն, կոշիկեղեն՝ տարիքասեռային առանձնահատկություններին և եղանակային պայմաններին համապատասխան.

4) անկողնային պարագաներ.

5) խաղալիքներ,

5) անձնական հիգիենայի պարագաներ (սրբիչ, օճառ, ատամի մածուկ, խոզանակ և այլն):

26. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները առանձնացված պայմաններում ապահովում են այնտեղ բնակվող (խնամվող) երեխաների նեղ անձնական պահանջունքները, անձնական հիգիենան ինքնուրույն կամ անհրաժեշտության դեպքում՝ աշխատողների օգնությամբ հոգալու հնարավորությունը:

27. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններն իրականացնում են երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության և խնամքի տրամադրմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն կարգով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ գործառույթներ:

28. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում երեխայի ժամանակավոր (որոշակի ժամկետով) տեղավորման դեպքում, երեխայի ընդունելությունն իրականացվում է շուրջօրյա, այդ թվում նաև՝ ոչ աշխատանքային օրերին: Լիազորած մարմնի կողմից երեխային բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն ուղեգրելու դեպքում, երեխայի ընդունելությունն իրականացվում է աշխատանքային օրերին, ժամը 9.00-18.00-ն ընկած ժամանակահատվածում:

29. Նույն ընտանիքի երեխաներին (քույրեր և եղբայրներ) բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում խնամք տրամադրելու անհրաժեշտության դեպքում, նրանք ընդունվում են (տեղավորվում են) բնակչության սոցիալական պաշտպանության միևնույն հաստատությունում, բացառությամբ, երբ՝

1) բժշկական ժամանակավոր հակացուցումներով պայմանավորված, այդ երեխաների խնամքն անհնար է իրականացնել բնակչության սոցիալական պաշտպանության միևնույն հաստատությունում,

2) երեխաներից մեկը կամ մի քանիսը, բայց ոչ բոլորը, տառապում են սույն կարգի 7-րդ կետով սահմանված հիվանդություններից որևէ մեկով, ինչպիսի պարագայում բոլոր երեխաների խնամքը հնարավոր չէ իրականացնել բնակչության սոցիալական պաշտպանության միևնույն տիպի հաստատությունում:

30. Բնակչության սոցիալական պաշտպանության այլ հաստատություններից, շուրջօրյա լրիվ խնամք տրամադրող այլ կազմակերպություններից, ստացիոնար բժշկական հաստատություններից տեղափոխման դեպքում, երեխան անմիջապես տեղավորվում է համապատասխան տարիքային խմբում: Մնացած բոլոր այլ

դեպքերում, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն երեխայի տեղափոխվելուց անմիջապես հետո, համապատասխան իրավասություններ ունեցող աշխատողը (կամ պաշտոնատար անձը) վերցնում է նրա հագուստը և անձնական իրերը՝ փստահանման նպատակով, այնուհետև նրան զննում է այդ հաստատության բժիշկը, որոշում ընդունելության համար բժշկական հակացուցումների առկայությունը կամ բացակայությունը և տալիս եզրակացություն երեխային սանիտարական մշակման ուղարկելու և հատուկ առանձնացված (կարանտինի) սենյակում տեղավորելու անհրաժեշտության (կամ դրա բացակայության) վերաբերյալ: Ժամը 18.00-ից հետո կամ ոչ աշխատանքային օրերին բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն տեղափոխվելու դեպքում, երեխան, մինչ տվյալ հաստատության բժշկի կամ համապատասխան բժշկական հաստատության կողմից նրա առողջական վիճակի մասին եզրակացության տրամադրումը, բայց ոչ ավելի, քան երկու օրով, տեղավորվում է հատուկ առանձնացված (կարանտինի) սենյակում:

31. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն երեխային ընդունելիս, զննման արդյունքում կամ համապատասխան բժշկական հաստատության կողմից տրամադրված եզրակացության համաձայն շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդության կասկածի կամ բժշկական այլ հակացուցումների հայտնաբերման դեպքում, տվյալ հաստատության բժիշկը կամ համապատասխան լիազորություններով օժտված աշխատողը (կամ պաշտոնատար անձը) երեխային անմիջապես տեղավորում է հատուկ առանձնացված (կարանտինի) սենյակում, ձեռնարկում անհրաժեշտ միջոցներ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) այլ երեխաների հետ տվյալ երեխայի անմիջական շփումը բացառելու համար, մեկօրյա ժամկետում այդ մասին տեղեկացնում է առողջապահության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի պետական հակահամաճարակային տեսչության տարածքային կենտրոն (բացառությամբ՝ (հոգեկան խանգարումների և էպիլեպսիայի դեպքերի) և ըստ անհրաժեշտության, ապահովում երեխայի տեղափոխումը մասնագիտացված բժշկական հաստատություն: Երեխային մասնագիտացված բժշկական հաստատություն տեղափոխելու դեպքում, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության համապատասխան լիազորություններով օժտված աշխատողը (կամ պաշտոնատար անձը) ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում, այդ մասին տեղեկացնում է տվյալ վայրի խնամակալության և հոգաբարձության մարմնին, Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնին, գործակալությանը և երեխայի օրինական ներկայացուցչին (առկայության պարագայում):

32. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն չի թույլատրվում բերել հրազեն, դրան համալրող դետալներ, սառը զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր, պայթուցիկ սարքեր, դյուրավառ կամ այրիչ նյութեր, ռադիոակտիվ նյութեր, թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր (բացառությամբ բժշկի կողմից նշանակված հոգեմետ (հոգեներգործուն) դեղամիջոցների), ինչպես նաև շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող այլ սարքեր: Սույն կետում նշված

առարկաների կամ նյութերի հայտնաբերման դեպքում, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության համապատասխան լիազորություններով օժտված աշխատողը (կամ պաշտոնատար անձը) այդ մասին անմիջապես իրազեկում է ոստիկանությանը:

33. Երեխան կարող է իր հետ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն բերել խաղալիքներ և շրջապատի համար վտանգ չներկայացնող այլ իրեր և ընտանի կենդանիներ, եթե դա արգելված չէ տվյալ հաստատության կանոններով և այդ հաստատության պայմաններն ընձեռում են այդ հնարավորությունը:

34. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո գտնվող՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն երեխայի ընդունելությունը ձևակերպվում է այդ հաստատության ղեկավարի հրամանով: Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնվող՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն երեխայի ընդունելությունը ձևակերպվում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում խնամք տրամադրող կազմակերպության՝ համապատասխան լիազորություն ունեցող պաշտոնատար անձի հրամանով: Երեխային բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն ընդունելու մասին հրամանն ընդունվում է սույն կարգի 30-րդ կետով սահմանված եզրակացությունը ստանալուց հետո, բայց ոչ ուշ, քան տվյալ եզրակացությունը ստանալու օրվա ավարտը:

35. Սույն կարգի 34-րդ կետում նշված հրամանի ընդունումից անմիջապես հետո, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության համապատասխան լիազորություններով օժտված աշխատողը (կամ պաշտոնատար անձը), ընդունված երեխայի մասին տվյալները գրանցում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության հաշվառման մատյանում, որի ձևը հաստատում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության ղեկավարը կամ խնամք տրամադրող կազմակերպության՝ համապատասխան լիազորություն ունեցող այլ պաշտոնատար անձը (կամ մարմինը):

36. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության հաշվառման մատյանը կարող է վարվել ինչպես փաստաթղթային (թղթային կրիչով), այնպես էլ էլեկտրոնային եղանակով՝ անհրաժեշտ տվյալները և տեղեկությունները համակարգչում մուտքագրելու միջոցով: Ընդ որում, հաշվառման մատյանը միաժամանակ փաստաթղթային և էլեկտրոնային եղանակներով կազմելու և վարելու դեպքում, դրանցում ներառված տվյալները և տեղեկություններն ամբողջությամբ պետք է համապատասխանեն միմյանց: Փաստաթղթային եղանակով վարվող հաշվառման մատյանը պետք է լինի համարակալված և էջակարված (թելակարված): Փաստաթղթային եղանակով վարվող հաշվառման մատյանը լրացվում է մուգ կապույտ կամ սև գույնի թանաքով գրիչով, ընթեռնելի ձեռագրով, առանց անհարկի հապավումներ և ջնջումներ կատարելու: Սխալ գրառման դեպքում այն երկու կողմից առնվում է փակագծի մեջ, որից հետո կատարվում է ճիշտ գրառումը և տվյալ էջի աջ անկյունում, հաշվառման մատյանում գրառում կատարող համապատասխան աշխատողի (պաշտոնատար անձի) կողմից լրացվում են «ուղղումը կատարված է իմ կողմից» բառերը և ուղղումը հավաստվում է ստորագրությամբ:

37. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության հաշվառման մատյանում գրանցվում են երեխայի մասին հետևյալ տեղեկությունները՝

- 1) անունը, հայրանունը, ազգանունը,
- 2) ծննդյան օրը, ամիսը, տարին և վայրը,
- 3) սեռը,
- 4) անձը հաստատող փաստաթղթի անվանումը, սերիան և համարը (առկայության դեպքում),

5) մինչ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն տեղափոխվելը տվյալ երեխայի հաշվառման հասցեն, իսկ հաշվառման մեջ չգտնվելու դեպքում՝ վերջին կամ նախկին հաշվառման հասցեն,

6) երեխայի հայտնաբերման կամ մինչև բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն տեղափոխվելը երեխայի փաստացի գտնվելու (վերջին բնակության) վայրը,

7) տեղեկություններ երեխայի ծնողների կամ ազգականների մասին (առկայության դեպքում),

8) երեխային բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն ընդունելու պատճառները,

9) երեխայի մասին տեղեկատվության տրամադրման աղբյուրը և տեղեկատվությունը տրամադրած անձի (մարմնի) տվյալները,

10) բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն ընդունման և դուրսգրման օրը, ամիսը, տարին,

11) սույն կարգի 38-րդ և 39-րդ կետերում նշված դեպքերում՝ երեխայի անհատականացման համար անհրաժեշտ այլ տվյալներ:

38. Ընկեցիկ երեխային բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն ընդունելիս, սույն կարգի 37-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված տվյալների փոխարեն հաշվառման մատյանում գրանցվում են ընկեցիկ երեխայի հայտնաբերման մասին արձանագրության համարը, օրը, ամիսը, տարին: Այդ դեպքում, հաշվառման մատյանը լրացնող աշխատողի (պաշտոնատար անձի) անձնական դիտարկման արդյունքում, հաշվառման մատյանում գրանցվում են նաև երեխայի մազերի, աչքերի գույնը, հասակը, սեռը, մոտավոր տարիքը և անհատականացման այլ նշաններ:

39. Եթե երեխան ընկեցիկ չէ, բայց չունի անձը հաստատող փաստաթուղթ, ապա հաշվառման մատյանում երեխայի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին, սեռը, հաշվառման մասին տվյալները գրանցվում են երեխայի բանավոր հայտարարության կամ այդ երեխայի մասին տեղեկատվություն տրամադրած մարմնի (անձի) հայտարարության հիման վրա: Այդ դեպքում, հաշվառման մատյանը լրացնող աշխատողի (պաշտոնատար անձի) անձնական դիտարկման արդյունքում, հաշվառման մատյանում գրանցվում են նաև երեխայի մազերի, աչքերի գույնը, հասակը և անհատականացման այլ նշաններ, ինչպես նաև նշվում է երեխայի անհատական տվյալների տրամադրման աղբյուրը: Երեխայի կողմից իր մասին սույն կետում նշված համապատասխան տվյալները չհայտնելու և այդ երեխայի անհատական տվյալների մասին այլ տեղեկատվության բացակայության դեպքում, հաշվառման մատյանը

լրացնող աշխատողի (պաշտոնատար անձի) անձնական դիտարկման արդյունքում, հաշվառման մատյանում գրանցվում են նաև երեխայի սեռը և մոտավոր տարիքը:

40. Երեխային բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն կրկին անգամ ընդունելու (դուրս գրելու) դեպքում, հաշվառման մատյանում այդ մասին կատարվում է համապատասխան գրառում և անհրաժեշտության դեպքում փոփոխվում են հաշվառման մատյանում գրանցված տվյալները:

41. Որդեգրման հանձնված երեխայի դուրսգրման դեպքում, հաշվառման մատյանի համապատասխան սյունակում նշվում է միայն «որդեգրված» բառը, իսկ նրան վերաբերող բոլոր փաստաթղթերը պահվում են չհրկիզվող պահարանում՝ առանձին կնքված ծրարով, և հրապարակման ենթակա չեն:

42. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) յուրաքանչյուր երեխայի համար, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության սոցիալական աշխատանքի մասնագետը կամ համապատասխան լիազորություններով օժտված այլ աշխատողը (կամ պաշտոնատար անձը) լրացնում է հաշվառման քարտ, որի ձևը հաստատում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության ղեկավարը կամ խնամք տրամադրող կազմակերպության՝ համապատասխան լիազորություն ունեցող պաշտոնատար անձը (կամ մարմինը): Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում երեխայի բնակվելու (խնամվելու) ողջ ժամանակահատվածում, երեխայի հաշվառման քարտը պահվում է քարտարանում, իսկ երեխային բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունից դուրս գրելու դեպքում, հաշվառման քարտը պահվում է տվյալ երեխայի անձնական գործում:

43. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունը կազմակերպում է այնտեղ բնակվող (խնամվող) երեխաների առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը՝ նրանց այնտեղ բնակվելու (խնամվելու) ողջ ժամանակահատվածում: Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) երեխաների առաջնային բժշկական օգնությունն իրականացնում է այդ հաստատության բժիշկը և բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության գտնվելու վայրի համապատասխան բժշկական հաստատությունը, իսկ անհրաժեշտության դեպքում, կազմակերպվում է համապատասխան բժշկական հաստատություններ կամ առողջարան երեխայի ուղեգրման գործընթացը: Երեխային ստացիոնար բժշկական հաստատություն տեղափոխելու դեպքում, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունը կազմակերպում է երեխայի խնամքի (այդ թվում նաև՝ սննդի) ապահովումը:

44. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) յուրաքանչյուր երեխայի համար լրացվում է բժշկական քարտ, որտեղ գրանցվում են նրա անձնական տվյալները, ինչպես նաև կատարված բժշկական զննության, իրականացված կլինիկալաբորատոր հետազոտությունների արդյունքները, ցույց տրված բժշկական օգնությունը և անհրաժեշտ այլ տվյալներ: Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում երեխայի բնակվելու (խնամվելու) ողջ ժամանակահատվածում, երեխայի բժշկական քարտը պահվում է քարտարանում,



իսկ երեխային բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունից դուրս գրելու դեպքում, այն պահվում է տվյալ երեխայի անձնական գործում:

45. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության բժիշկը յուրաքանչյուր օր կազմակերպում է այնտեղ բնակվող (խնամվող) բոլոր երեխաների համայն և նրանց ցույց տալիս անհրաժեշտ բուժօգնություն, իսկ ոչ ուշ, քան եռամսյակը մեկ անգամ իրականացնում է այդ հաստատությունում բնակվող (խնամվող) բոլոր երեխաների բուժզննում և կատարում գրառում նրանց բժշկական քարտերում:

46. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) երեխայի՝ շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդության կասկածի դեպքում, տվյալ հաստատության բժիշկը կամ համապատասխան լիազորություններով օժտված այլ աշխատողը (կամ պաշտոնատար անձը) երեխային անմիջապես տեղավորում է հատուկ առանձնացված (կարանտինի) սենյակում, ձեռնարկում անհրաժեշտ միջոցներ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) այլ երեխաների հետ տվյալ երեխայի անմիջական շփումը բացառելու համար, մեկօրյա ժամկետում այդ մասին տեղեկացնում է առողջապահության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի պետական հակահամաճարակային տեսչության տարածքային կենտրոն և ըստ անհրաժեշտության, ապահովում երեխայի տեղափոխումը մասնագիտացված բժշկական հաստատություն: Երեխային մասնագիտացված բժշկական հաստատություն տեղափոխելու դեպքում, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության համապատասխան լիազորություններով օժտված աշխատողը (կամ պաշտոնատար անձը) ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում, այդ մասին տեղեկացնում է երեխայի օրինական ներկայացուցչին (առկայության պարագայում):

47. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) յուրաքանչյուր երեխայի համար կազմվում է անձնական գործ, որում ներառվում են երեխային բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն ընդունելու մասին հրամանը (դրա պատճենը), երեխայի անձը հաստատող փաստաթուղթը, երեխայի լուսանկարը, երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական ծրագիրը, տվյալ երեխային և նրան տրամադրվող սոցիալական ծառայություններին վերաբերող այլ փաստաթղթեր (դրանց պատճեններ): Յուրաքանչյուր երեխայի անձնական գործի համարը պետք է նույնությամբ համապատասխանի հաշվառման մատյանում տվյալ երեխայի վերաբերյալ կատարված գրանցման հերթական համարին: Երեխայի՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունից բնակչության սոցիալական պաշտպանության մեկ այլ հաստատություն կամ շուրջօրյա լրիվ խնամք տրամադրող այլ կազմակերպություն տեղափոխվելու դեպքում, երեխայի անձնական գործը, փոխանցվում է այն հաստատությանը կամ կազմակերպությանը, որտեղ տեղափոխվում է երեխան: Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունից երեխայի դուրսգրման այլ դեպքերում, երեխայի անձնական գործը պահպանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

48. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունը երեխայի ընդունումից հետո եռօրյա ժամկետում, տվյալ հաստատության սոցիալական աշխատողը գնահատում է երեխայի սոցիալական կարիքները, իր իրավասությունների շրջանակներում իրականացնում է նրա՝ «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհատական սոցիալական ծրագրով նախատեսված միջոցառումները, դրանում նշված ժամկետներում մասնակցում է մասնագիտական քննարկումներին և տվյալ երեխայի սոցիալական կարիքներին համապատասխան, նրան տրամադրում է սոցիալական ծառայություններ:

49. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության սոցիալական աշխատողը և համապատասխան լիազորություններով օժտված այլ աշխատողները (հոգեբան, բժիշկ, մանկավարժ և այլն), երեխային սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման, սոցիալական նոր միջավայրին հարմարվելու նպատակով, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունը երեխայի ընդունումից հետո եռօրյա ժամկետում, կազմում են երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական ծրագիրը, պարբերաբար վերանայում այն և յուրաքանչյուրն իր իրավասությունների շրջանակներում իրականացնում են երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումներ: Ծնողական իրավունքներից չզրկված ծնող (ծնողներ) կամ օրինական այլ ներկայացուցիչներ կամ ազգականներ ունեցող երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական ծրագիրը կազմելիս՝ հաշվի է առնվում նրանց կարծիքը, եթե այն բացասաբար չի ազդի երեխայի վերականգնման գործընթացի վրա կամ չի խոչընդոտի դրա արդյունավետ իրականացմանը:

50. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունը, այնտեղ երեխայի բնակվելու (խնամվելու) ողջ ժամանակահատվածում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան, երեխային ապահովում է անվտանգ միջավայրով՝ զերծ պահելով ցանկացած բռնությունից, շահագործումից, իրավունքների և օրինական շահերի այլ ոտնահարումից:

51. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունը, այնտեղ երեխայի բնակվելու (խնամվելու) ողջ ժամանակահատվածում, ապահովում է երեխայի բազմակողմանի և ներդաշնակ զարգացումը՝ հաշվի առնելով նրա հոգեկան, սեռատարիքային, ազգային և էթնիկական առանձնահատկությունները, երեխայի նախասիրությունները, հետաքրքրություններն, ընդունակությունները և պահանջմունքները:

52. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունն ապահովում է այնտեղ բնակվող (խնամվող) երեխաների կրթությունն ու դաստիարակումը, այդ թվում՝ կազմակերպում է երեխաներին հիմնական կրթության մատուցումը, որն իրականացվում է հանրակրթական դպրոցներում, իսկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հատուկ դպրոցներում աշակերտելու միջոցով:

53. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված՝ երեխայի խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ սոցիալական

նվազագույն չափորոշիչներին համապատասխան, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունը, այնտեղ բնակվող (խնամվող) և դպրոցում սովորող երեխային ապահովում է անձնական մանր ծախսեր կատարելու համար անհրաժեշտ գումարով, սովորեցնում է խելամիտ և արդյունավետ օգտագործել ունեցած գումարը:

54. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունն ապահովում է այնտեղ բնակվող (խնամվող) երեխայի առողջ ապրելակերպի (անունդ, սպորտ, անձնական հիգիենա, ազատ ժամանց) համար անհրաժեշտ պայմաններ: Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունը կազմակերպում է երեխաների մասնակցությունը մարզական, մշակութային միջոցառումներին, մրցույթներին, երգի, պարի, նկարչության, կարուճկի, սպորտային և այլ խմբակներին՝ ըստ նրանց հակումների և հետաքրքրությունների:

55. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունն աջակցում է այնտեղ բնակվող (խնամվող) երեխային՝ կենսաբանական ընտանիքի հետ սոցիալական կապերը վերականգնելու և (կամ) ամրապնդելու և նրան ընտանիք վերադարձնելու հարցում, եթե դա բխում է երեխայի շահերից: Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) երեխաներին կարող են այցելել նրանց ծնողները (ծնողը)՝ ծնողական իրավունքից զրկված չլինելու դեպքում, ընտանիքի այլ անդամները, ազգականները, ծանոթները և ընկերները, աջակցող ցանցի անդամները (նրանց ներկայացուցիչները), պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ և անձինք, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ անձինք գտնվում են ոչ սթափ կամ հակահիգիենիկ վիճակում կամ եթե դա բացասաբար չի ազդի երեխայի առողջության, դաստիարակման, սոցիալ-հոգեբանական վերականգնման գործընթացի վրա կամ չի խոչընդոտի դրա արդյունավետ իրականացմանը: Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) երեխաների մոտ սույն կետում նշված անձանց ընդունելությունն իրականացվում է կանոններով սահմանված ընթացակարգին համապատասխան:

56. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) երեխայի կողմից այն ինքնակամ լքելու կամ երեխայի անհետանալու (գտնվելու վայրն անհայտ լինելու) դեպքում, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության ղեկավարը կամ համապատասխան լիազորություններով օժտված այլ աշխատողը (պաշտոնատար անձը), տվյալ հանգամանքի մասին հայտնի դառնալուց հետո անմիջապես այդ մասին տեղեկացնում է ոստիկանությանը և երեխայի օրինական ներկայացուցիչներին (առկայության դեպքում):

57. Անկախ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում երեխային խնամք տրամադրելու հանգամանքից, գործակալությունը, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ միջգերատեսչական համագործակցության և աջակցող ցանցի այլ անդամները ձեռնարկում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված

միջոցներ՝ հասանելի ռեսուրսների որոնման միջոցով երեխայի հետագա խնամքն ընտանիքում կազմակերպելու նպատակով:

58. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում երեխային խնամքի տրամադրման ողջ ժամանակահատվածում, տվյալ հաստատության պաշտոնատար անձինք, գործակալությունը, Հայաստանի Հանրապետության մարզպետարանի (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը, երեխային ընտանիքում տեղավորելու հնարավորության մասին համապատասխան տեղեկատվություն ստանալուց հետո, յոթնօրյա ժամկետում այդ մասին տեղեկացնում են բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության գտնվելու վայրի խնամակալության և հոգաբարձության մարմնին:

59. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) այն երեխայի ծնողների (կամ նրանցից որևէ մեկի կամ միակ ծնողի), որոնց գտնվելու վայրն անհայտ էր, ինչպես նաև երեխայի անհայտ ծնողների հայտնաբերման դեպքում, ոստիկանությունն այդ մասին գրավոր տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության մարզպետարանին (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանին), գործակալությանը և բնակչության սոցիալական պաշտպանության այն հաստատությանը, որում բնակվում (խնամվում) է տվյալ երեխան:

60. Խնամակալության և հոգաբարձության մարմինը կամ Հայաստանի Հանրապետության մարզպետարանի (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում ժամանակավոր տեղավորվող երեխայի ծնողներին (կամ այլ օրինական ներկայացուցիչին) նախազգուշացնում է այն մասին, որ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում երեխային տեղավորելու հիմքերը վերանալուց հետո երեխային ընտանիք վերադարձնելուց խուսափելու դեպքում, երեխան օրենքով սահմանված դեպքերում և կարգով կարող է որդեգրվել, կամ դաստիարակության հանձնվել խնամատար ընտանիքում, կամ նրա նկատմամբ սահմանվել խնամակալություն կամ հոգաբարձություն:

61. Բացառությամբ սույն կարգով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերի, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունը, նրա պաշտոնատար անձինք և աշխատողները պարտավոր են որևէ կերպ չհրապարակել, չտարածել խնամքի տրամադրման գործունեության ընթացքում երեխաների և նրանց օրինական ներկայացուցիչների վերաբերյալ իրենց հայտնի դարձած անհատական տվյալները, այդ երեխաների և նրանց ընտանիքների վերաբերյալ այնպիսի տեղեկություններ և տվյալներ, որոնք հնարավորություն կընձեռեն նույնականացնելու այդ երեխաներին, ինչպես նաև երրորդ անձանց չընձեռել այդ տվյալները և տեղեկությունները հայթայթելու այնպիսի հնարավորություն, որ կարող է առաջանալ թույլատրելու, չխոչընդոտելու կամ նման տեղեկությունների պահպանման կարգի խախտման հետևանքով:

**Վ. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԻՊԻ ԵՎ  
ՀԱՏՈՒԿ (ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ) ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵՐԵՒԱՅԻ  
ԴՈՒՐՍԳՐՈՒՄԸ**

62. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունից երեխան՝ մինչև 18 տարին լրանալը, կարող է դուրս գրվել.

1) նրան կենսաբանական ընտանիք վերադարձնելու, կամ՝

2) որդեգրման հանձնելու, կամ՝

3) բնակչության սոցիալական պաշտպանության մեկ այլ հաստատություն կամ շուրջօրյա խնամք տրամադրող այլ կազմակերպություն տեղափոխվելու, կամ՝

4) խնամատար ընտանիք՝ դաստիարակության հանձնելու կամ՝

5) այլ անձի՝ երեխայի խնամակալ կամ հոգաբարձու նշանակվելու և նրա ընտանիքում տեղավորվելու դեպքում կամ

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

63. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) երեխան կենսաբանական ընտանիք է վերադարձվում երեխայի ծնողների (ծնողի) կամ ընտանիքի չափահաս այլ անդամի գրավոր դիմումի և ընտանիքի բնակության վայրի՝ Հայաստանի Հանրապետության մարզպետարանի (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում տրված եզրակացության հիման վրա, որի մեկական օրինակներն ուղարկվում են նաև լիազորած մարմնին և ընտանիքի բնակության վայրի խնամակալության և հոգաբարձության մարմնին:

64. Երեխան բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունից բնակչության սոցիալական պաշտպանության մեկ այլ հաստատություն կամ շուրջօրյա խնամք տրամադրող այլ կազմակերպություն կարող է տեղափոխվել այն հաստատության ղեկավարի հիմնավորված առաջարկությամբ, որում տվյալ պահին բնակվում (խնամվում) է երեխան՝ հաշվի առնելով երեխայի տարիքը և առողջական վիճակը: Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունից բնակչության սոցիալական պաշտպանության մեկ այլ հաստատություն կամ շուրջօրյա խնամք տրամադրող այլ կազմակերպություն երեխայի տեղափոխվելն իրականացվում է լիազորած մարմնի վերաուղեգրման միջոցով: Սույն կետով սահմանված դեպքերում, երեխայի անձնական գործը փոխանցվում է այն հաստատությանը կամ կազմակերպությանը, որտեղ տեղափոխվում է երեխան:

65. Երեխայի որդեգրման հանձնելու, խնամատար ընտանիք՝ դաստիարակության հանձնելու և այլ անձի՝ երեխայի խնամակալ կամ հոգաբարձու նշանակվելու դեպքում բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունից երեխայի դուրսգրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված պահանջներին համապատասխան:

66. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունից երեխայի դուրսգրման մասին տվյալները գրանցվում են սույն կարգի 37-րդ կետի 10-րդ ենթակետին, 40-րդ և 41-րդ կետերին համապատասխան:

**VI. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԱՄՔԻ ԳԻՇԵՐՕԹԻԿ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՆԱՄՔԻ  
ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ**

67. Բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատությունում խնամք տրամադրելու վերաբերյալ գրավոր դիմումը երեխայի ծնողը կամ այլ օրինական ներկայացուցիչն անձամբ կամ ներկայացուցչի միջոցով կարող է ներկայացնել՝

1) գործակալությանը (իսկ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնի առկայության դեպքում՝ միասնական ընդունարան)՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո գտնվող բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատության կողմից խնամքի տրամադրման համար,

2) խնամք տրամադրող կազմակերպությանը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնվող բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատության կողմից խնամքի տրամադրման համար:

68. Սույն կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված դեպքում, խնամքի տրամադրման համար դիմումին կից, բացառությամբ սույն կարգի 69-րդ կետով նախատեսված դեպքի, անձը գործակալություն է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) երեխայի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթը (ծննդյան վկայական կամ անձնագիր կամ նույնականացման քարտ) և դրա պատճենը,

2) երեխայի՝ Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ հանդիսանալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունքը հաստատող փաստաթուղթը (կացության քարտը) և դրա պատճենը, իսկ փախստականի կարգավիճակ ունենալու դեպքում՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը և դրա պատճենը,

3) համապատասխան բժշկական հաստատության (հաստատությունների) կողմից տրված՝ երեխայի առողջական վիճակի մասին բժշկական տեղեկանք,

4) տեղեկանք բնակության վայրից՝ երեխայի ընտանիքի անդամների մասին,

5) բնակչության պետական ռեգիստր վարող մարմնի կողմից տրված տեղեկանք՝ երեխայի հաշվառման հասցեի վերաբերյալ,

6) դիմումը ներկայացնողի անձը հաստատող փաստաթուղթը, ինչպես նաև՝

ա. երեխայի ծնողը կամ այլ օրինական ներկայացուցիչը հանդիսանալու դեպքում՝ այդ փաստը հավաստող համապատասխան փաստաթուղթը,

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանող լիազորագրի հիման վրա երեխայի ծնողի կամ օրինական ներկայացուցչի ներկայացուցիչը լինելու դեպքում՝ լիազորագիրը, իսկ այն դեպքում, երբ

ներկայացուցիչը փաստաբան է՝ նաև փաստաբանական գործունեության արտոնագրի պատճենը:

69. Խնամքի տրամադրման համար գործակալությանը ներկայացվող դիմումին կից չեն պահանջվում սույն կարգի 68-րդ կետում նշված այն փաստաթղթերը, որոնցում ներառված տվյալներն առկա են համապատասխան մարմինների էլեկտրոնային տեղեկատվական շտեմարաններում (բազաներում):

70. Գործակալությունը սույն կարգի 68-րդ կետով սահմանված փաստաթղթերը ստանալուց հետո, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում, կատարում է տնային այցելություն՝ տվյալ ընտանիքի կարիքների գնահատման (կենսապայմանների ուսումնասիրության) նպատակով և Հայաստանի Հանրապետության մարզպետարանին (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանին) է ներկայացնում սույն կարգի 68-րդ կետով նախատեսված փաստաթղթերը (դրանց պատճենները) և բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատություն ուղեգրելու հնարավորության մասին իր առաջարկությունը (եզրակացության տեսքով)՝ նշելով ընտանիքների անապահովության գնահատման համակարգում տվյալ ընտանիքի հաշվառված լինելու (կամ չլինելու) և սոցիալապես անապահով լինելու (կամ չլինելու) վերաբերյալ:

71. Հայաստանի Հանրապետության մարզպետարանի (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը, սույն կարգի 68-րդ կետով սահմանված փաստաթղթերը և գործակալության առաջարկությունը ստանալուց հետո հինգօրյա ժամկետում, խնամքի տրամադրում հայցող երեխայի ընտանիքի՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված լինելու և սոցիալապես անապահով լինելու դեպքում, ուսումնասիրում է բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատությունում երեխային տեղավորելու այլընտրանքային տարբերակները և դրանց բացակայության դեպքում, ներկայացնում գրավոր եզրակացություն՝ երեխային բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատություն ուղեգրելու վերաբերյալ:

72. Հայաստանի Հանրապետության մարզպետարանը (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանը) երեխային բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատություն ուղեգրելու վերաբերյալ եզրակացությունը, այն կազմելուց հետո եռօրյա ժամկետում, ներկայացնում է լիազորած մարմին՝ դրան կցելով սույն կարգի 68-րդ կետով սահմանված փաստաթղթերը և գործակալության առաջարկությունը:

73. Լիազորած մարմինը Հայաստանի Հանրապետության մարզպետարանի (կամ Երևանի քաղաքապետարանի) կողմից սույն կարգի 72-րդ կետով սահմանված փաստաթղթերը ստանալուց հետո, եռօրյա ժամկետում՝

1) երեխային ուղեգրում է բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատություն կամ

2) դրանք վերադարձնում է Հայաստանի Հանրապետության մարզպետարան (իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարան), եթե երեխային բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատություն ուղեգրելու վերաբերյալ

եզրակացությունը օրենսդրորեն հիմնավորված չէ կամ լիազորած մարմնի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ սույն կարգի 68-րդ կետով սահմանված փաստաթղթերից որևէ մեկում առկա են ոչ հավաստի տեղեկություններ՝ տեղեկացնելով հետ վերադարձման պատճառների և լրացուցիչ ուսումնասիրություններ կատարելու անհրաժեշտության վերաբերյալ:

74. Հայաստանի Հանրապետության մարզպետարանի (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատությունում տեղավորվող երեխայի ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցչին գրավոր նախազգուշացնում է այն մասին, որ տվյալ հաստատությունում երեխային տեղավորելու հիմքերը վերանալուց հետո երեխային ընտանիք վերադարձնելուց կամ երեխային այցելելուց կամ ուսումնական արձակուրդների ժամանակահատվածում երեխային ընտանիքում պահելուց խուսափելու կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է կիրառվել երեխային հետագա խնամքի տրամադրման այլ ձևերից որևէ մեկը (բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում խնամքի տրամադրում, որդեգրում, խնամակալի կամ հոգաբարձուի նշանակում, տեղավորում խնամատար ընտանիքում):

75. Բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատություն երեխայի ընդունելությունն իրականացվում է աշխատանքային օրերին, ժամը 9.00-18.00-ն ընկած ժամանակահատվածում:

76. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո գտնվող՝ բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատություն երեխայի ընդունելությունը ձևակերպվում է այդ հաստատության ղեկավարի հրամանով: Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնվող՝ բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատություն երեխայի ընդունելությունը ձևակերպվում է խնամք տրամադրող կազմակերպության՝ համապատասխան լիազորություն ունեցող պաշտոնատար անձի հրամանով:

77. Բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատությունը վարում է այնտեղ բնակվող (խնամվող) երեխաների հաշվառման մատյան, որի ձևը հաստատում է տվյալ հաստատության ղեկավարը կամ խնամք տրամադրող կազմակերպության՝ համապատասխան լիազորություն ունեցող այլ պաշտոնատար անձը (կամ մարմինը): Հաշվառման մատյանը կարող է վարվել ինչպես փաստաթղթային (թղթային կրիչով), այնպես էլ էլեկտրոնային եղանակով: Հաշվառման մատյանում գրանցվում են երեխայի մասին հետևյալ տեղեկությունները՝

- 1) անունը, հայրանունը, ազգանունը,
- 2) ծննդյան օրը, ամիսը, տարին և վայրը,
- 3) սեռը,

4) անձը հաստատող փաստաթղթի անվանումը, սերիան և համարը (առկայության դեպքում),



5) մինչ բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատություն տեղափոխվելը տվյալ երեխայի հաշվառման հասցեն,

6) բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն ընդունման և դուրսգրման օրը, ամիսը, տարին:

78. Հաշվառման մատյանում կարող են լրացվել նաև սույն կարգի 77-րդ կետում չնշված՝ երեխայի վերաբերյալ այլ անհրաժեշտ տվյալներ:

79. Բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատությունն այնտեղ բնակվող (խնամվող) երեխաների հիմնական կրթությունն ապահովում է տվյալ հաստատության տեղակայման վայրին մոտ գտնվող հանրակրթական դպրոցներից որևէ մեկում:

80. Բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատությունում երեխայի խնամքի տրամադրման հետ կապված այլ հարաբերությունները կարգավորվում են սույն կարգի IV բաժնով սահմանված պահանջներին համապատասխան, եթե այլ բան չի բխում դրանց կարգավորման առանձնահատկություններից:

81. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո գտնվող՝ բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատությունից երեխան՝ մինչև 18 տարին լրանալը, կարող է դուրս գրվել՝

1) երեխայի ծնողների (ծնողի) կամ օրինական այլ ներկայացուցչի գրավոր դիմումի և ընտանիքի բնակության վայրի՝ Հայաստանի Հանրապետության մարզպետարանի (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում տրված եզրակացության հիման վրա, որի մեկական օրինակներն ուղարկվում են նաև լիազորած մարմնին և գործակալությանը, կամ՝

2) սույն կարգի 74-րդ կետով սահմանված դեպքերում՝ երեխային հետագա խնամքի տրամադրման այլ ձևերից որևէ մեկը կիրառելու պարագայում,

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

## **VII. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԱԾՈՒԹՅԱՆ ՑԵՐԵԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԵՐԵՎԱՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ**

82. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո գտնվող կամ լիազորած մարմնի հետ համապատասխան պայմանագիր կնքած՝ սոցիալական հոգաձության ցերեկային կենտրոններում խնամքը տրամադրվում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ հաշմանդամություն ունեցող երեխաներին:

83. Լիազորած մարմնի հետ համապատասխան պայմանագիր չկնքած՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնվող սոցիալական հոգաձության ցերեկային կենտրոնները կարող են խնամք տրամադրել սույն կարգի 82-րդ կետում չնշված այլ երեխաներին՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն կարգով, այլ նորմատիվ իրավական ակտերով և

խնամք տրամադրող կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան:

84. Սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնը (այսուհետ՝ կենտրոն) խնամքը տրամադրում է կենտրոնում, ցերեկային ժամերին, կենտրոնի կանոնադրությամբ կամ ներքին իրավական այլ ակտերով սահմանված ժամանակահատվածում:

85. Ելնելով երեխաների առանձնահատուկ կարիքներից, տարիքային կազմից, իրենց կանոնադրությամբ ամրագրված նպատակներից և այլ գործոններից, կենտրոնները կարող են ունենալ տարատեսակ ուղղվածություններ՝ նախատեսված երեխաների առանձին խմբերի (հաշմանդամություն ունեցող երեխաների, դաստիարակության դժվարություններ ունեցող երեխաների, ծնողական խնամքից զրկված երեխաների) համար:

86. Կենտրոնում խնամքը տրամադրվում է՝

1) երեխայի ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի գրավոր դիմումի հիման վրա.

2) կենտրոնի նախաձեռնությամբ:

87. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո գտնվող կամ լիազորված մարմնի հետ համապատասխան պայմանագիր կնքած կենտրոնում խնամք տրամադրելու վերաբերյալ գրավոր դիմումն երեխայի ծնողը կամ այլ օրինական ներկայացուցիչն անձամբ կամ ներկայացուցչի միջոցով կարող է ներկայացնել գործակալությանը (իսկ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնի առկայության դեպքում՝ միասնական ընդունարան) կամ կենտրոնին (կենտրոնում խնամք տրամադրող կազմակերպությանը):

88. Լիազորված մարմնի հետ համապատասխան պայմանագիր չկնքած՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնվող կենտրոնում խնամք տրամադրելու վերաբերյալ գրավոր դիմումն երեխայի ծնողը կամ այլ օրինական ներկայացուցիչն անձամբ կամ ներկայացուցչի միջոցով ներկայացնում է կենտրոնին (կամ կենտրոնում խնամք տրամադրող կազմակերպությանը):

89. Սույն կարգի 87-րդ կետով սահմանված դեպքում, գրավոր դիմումին կից ներկայացվում են՝

1) երեխայի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու դեպքում՝ երեխայի անձը հաստատող փաստաթուղթը (ծննդյան վկայական կամ անձնագիր կամ նույնականացման քարտ) և դրա պատճենը,

2) երեխայի՝ Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ հանդիսանալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունքը հաստատող փաստաթուղթը (կացության քարտը) և դրա պատճենը, իսկ փախստականի կարգավիճակ ունենալու դեպքում՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը և դրա պատճենը,

3) համապատասխան բժշկական հաստատության (հաստատությունների) կողմից տրված՝ երեխայի առողջական վիճակի մասին բժշկական տեղեկանք,

4) հաշմանդամության վերաբերյալ տեղեկանքը՝ տրված բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող մարմնի կողմից, եթե երեխան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել է որպես «հաշմանդամություն ունեցող երեխա»:

90. Խնամքի տրամադրման համար գործակալությանը ներկայացվող դիմումին կից չեն պահանջվում սույն կարգի 89-րդ կետում նշված այն փաստաթղթերը, որոնցում ներառված տվյալներն առկա են համապատասխան մարմինների էլեկտրոնային տեղեկատվական շտեմարաններում (բազաներում):

91. Գործակալությունը սույն կարգի 89-րդ կետով սահմանված փաստաթղթերը ստանալուց հետո, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում, իրականացնում է տվյալ ընտանիքի սոցիալական կարիքների գնահատում: Գործակալության կողմից երեխային կենտրոն ուղղորդելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների լիազորությունների կարգը սահմանելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ և այլ իրավական ակտերով:

92. Սույն կարգի 87-րդ կետով սահմանված դեպքում, երեխային խնամք տրամադրելու վերաբերյալ գրավոր դիմումը կենտրոնին (կենտրոնում խնամք տրամադրող կազմակերպությանը) ներկայացնելիս, կենտրոնը, դիմումը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում, ուսումնասիրում է դրան կից ներկայացված փաստաթղթերը, կենտրոնի սոցիալական աշխատանքի մասնագետից, բժշկից և հոգեբանից կազմված մասնագիտական խմբի միջոցով իրականացնում է երեխայի կենսապայմանների ուսումնասիրություն և կենտրոնի ղեկավարին կամ համապատասխան լիազորություններ ունեցող պաշտոնատար անձին (մարմնին) ներկայացնում կենտրոնում երեխային խնամք տրամադրելու (կամ չտրամադրելու) վերաբերյալ եզրակացություն:

93. Կենտրոնը կարող է իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված միջոցառումներ սեփական նախաձեռնությամբ երեխային կենտրոնում խնամք տրամադրելու նպատակով՝ այդ երեխայի ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնության դեպքում:

94. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո գտնվող կենտրոններում երեխայի ընդունելությունը ձևակերպվում է կենտրոնի ղեկավարի հրամանով: Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնվող կենտրոններում երեխայի ընդունելությունը ձևակերպվում է կենտրոնում խնամք տրամադրող կազմակերպության՝ համապատասխան լիազորություն ունեցող պաշտոնատար անձի հրամանով:

95. Կենտրոնում խնամքը տրամադրվում է հիմնականում հետևյալ սոցիալական ծառայությունների ձևով.

1) սնունդ՝ օրական մեկ անգամ.

2) սոցիալ-հոգեբանական օգնություն, այդ թվում՝ երեխայի ընտանիքի անդամներին.

3) իրավական խորհրդատվություն.

4) կրթաուսումնական կամ ուսումնադաստիարակչական ծառայություններ.

5) մասնագիտական կողմնորոշում.

6) արվեստի միջոցով թերապիա.

7) օկուպացիոն թերապիա (շտկիչ վարժանքներով թերապիա):

96. Կենտրոնը կազմակերպում է խնամք ստացող երեխաների՝

1) աշխատանքային թերապիան (16 տարեկանից բարձր երեխաների համար),

2) առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը.

3) ժամանցը, ինչպես նաև մշակութային միջոցառումներ.

4) սոցիալական ներառմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ միջոցառումներ:

97. Կենտրոնում երեխայի խնամքը տրամադրվում է նրա գնահատված սոցիալական կարիքներին համապատասխան:

98. Կենտրոնում երեխայի ընդունելությունից հետո եռօրյա ժամկետում, կենտրոնի սոցիալական աշխատանքի մասնագետը և համապատասխան լիազորություններով օժտված այլ աշխատողները (հոգեբան, բժիշկ, մանկավարժ և այլն), կազմում են երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական ծրագիրը, պարբերաբար վերանայում այն և յուրաքանչյուրն իր իրավասությունների շրջանակներում իրականացնում են երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումներ:

99. Կենտրոնն երեխայի առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը կազմակերպում է կենտրոնի գտնվելու վայրի համապատասխան ամբուլատոր բժշկական հաստատությունում:

100. Կենտրոնը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ՝ ուսումնական հաստատություններից դուրս մնացած երեխաներին կրթական հաստատություններում տեղավորելու համար, կազմակերպում է դպրոցահասակ երեխայի դասապատրաստումը դպրոցական ժամերից հետո, աջակցում երեխաների աշխատանքային հմտությունների ձևավորմանը, կազմակերպում երեխայի ազատ ժամանցը՝ մարզական և մշակութային միջոցառումներին մասնակցելու միջոցով, ինչպես նաև աջակցում է նրանց իրավունքների պաշտպանությանն ուղղված աշխատանքներին:

101. Կենտրոնում խնամվող յուրաքանչյուր երեխայի համար, կենտրոնի սոցիալական աշխատանքի մասնագետը կամ համապատասխան լիազորություններով օժտված այլ աշխատողը (կամ պաշտոնատար անձը) լրացնում է հաշվառման քարտ, որտեղ գրանցում է կենտրոնում խնամվող երեխայի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝

1) անունը, հայրանունը, ազգանունը,

2) ծննդյան օրը, ամիսը, տարին և վայրը,

3) սեռը,

4) անձը հաստատող փաստաթղթի տեսակը, սերիան և համարը,

5) երեխայի հաշվառման հասցեն,

6) կենտրոնում խնամք տրամադրելու պատճառները.

7) կենտրոնում երեխայի ընդունման և կենտրոնից դուրսգրման օրը, ամիսը, տարին,

8) երեխայի ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների հետ հետադարձ կապն ապահովելու համար անհրաժեշտ տվյալներ:

102. Երեխային կենտրոն կրկին անգամ ընդունելու (դուրս գրելու) դեպքում, նրա հաշվառման քարտում այդ մասին կատարվում է համապատասխան գրառում և անհրաժեշտության դեպքում փոփոխվում են հաշվառման քարտում գրանցված տվյալները:

103. Կենտրոնը վարում է այնտեղ խնամվող երեխաների հաշվառման մատյան, որի ձևը հաստատում է տվյալ կենտրոնի ղեկավարը կամ խնամք տրամադրող կազմակերպության՝ համապատասխան լիազորություն ունեցող այլ պաշտոնատար անձը (կամ մարմինը):

104. Կենտրոնում խնամվող յուրաքանչյուր երեխայի համար կազմվում է անձնական գործ, որում ընդգրկվում են երեխային կենտրոն ընդունելու մասին հրամանը (դրա պատճենը), երեխայի անձը հաստատող փաստաթղթի պատճենը, երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական ծրագիրը, երեխայի լուսանկարը, տվյալ երեխային և նրան տրամադրվող սոցիալական ծառայություններին վերաբերող այլ փաստաթղթեր (դրանց պատճեններ):

105. Կենտրոնում խնամքի տրամադրումը դադարեցվում է՝

1) խնամք ստացող երեխայի ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի գրավոր դիմումի հիման վրա.

2) բժշկական ժամանակավոր հակացուցումներով պայմանավորված՝ կենտրոնում խնամք տրամադրելու անհնարինության դեպքում՝ մասնագիտացված բժշկական հաստատության եզրակացության հիման վրա.

3) երեխայի՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն կամ շուրջօրյա լրիվ խնամք տրամադրող այլ կազմակերպություն ընդունվելու դեպքում.

4) կենտրոնի բազմամասնագիտական խմբի կողմից տրված եզրակացության հիման վրա՝ երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնման դեպքում.

5) կենտրոնում խնամք տրամադրելու հիմքերի վերացման դեպքում.

6) երեխայի մահվան դեպքում.

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

106. Կենտրոնում երեխայի խնամքի դադարեցումը ձևակերպվում է սույն կարգի 94-րդ կետում նշված պաշտոնատար անձի հրամանով:

107. Երեխային տրամադրվող խնամքը դադարեցնելուց հետո կենտրոնը վեց ամսվա ընթացքում այցելությունների կամ հանդիպումների միջոցով պահպանում է կապը երեխայի և նրա ընտանիքի հետ:

## **VIII. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼԻԱԶՈՐԱԾ ՄԱՐՄՆԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ**

108. Բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի, հատուկ (մասնագիտացված), խնամքի գիշերօթիկ հաստատությունները և սոցիալական

հոգածության ցերեկային կենտրոնները, իրենց գործառույթների իրականացման շրջանակներում համագործակցում են լիազորած մարմնի, ոստիկանության, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման այլ մարմինների, նախադպրոցական կրթական, հանրակրթական, բժշկական կազմակերպությունների, տարածքային մակարդակում գործող աջակցող ցանցի անդամների, այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ:

109. Բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի, հատուկ (մասնագիտացված), խնամքի գիշերօթիկ հաստատությունները և սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնները, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերում և կարգով, լիազորած մարմնին են ներկայացնում խնամքի տրամադրման մասին տեղեկատվություն:

110. Սույն կարգով նախատեսված դեպքերում Գործակալության և լիազորած մարմնի միջև տեղեկատվության փոխանակությունը և փաստաթղթերի առաքումն իրականացվում է գրավոր կերպով՝ փոստային առաքմամբ կամ առձեռն հանձնելու միջոցով, կամ էլեկտրոնային փոստի միջոցով կամ առցանց եղանակով՝ սոցիալական աջակցության բնագավառի տեղեկատվական շտեմարանների միջոցով, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

**ՏԱՐԵՑ ԵՎ (ԿԱՄ) ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԽՆԱՄՔԻ  
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով կարգավորվում են տնային պայմաններում, բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատություններում ու սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններում տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի դրույթները չեն տարածվում սոցիալական սպասարկում իրականացնող այլ կազմակերպություններում, կենտրոններում, հիմնարկներում տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման հետ կապված հարաբերությունների վրա:

3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված՝ բնակչության սոցիալական պաշտպանության այլ տիպերի հաստատություններում (շուրջօրյա խնամքի տներ, սատարող կացարաններ, համայնքային ցերեկային կենտրոններ և այլն) հոգեկան առողջության խնդիրներ ունեցող տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման հետ կապված հարաբերությունների առանձնահատկությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով, այդ հաստատություններում խնամքի տրամադրման հետ կապված հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերով:

4. Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքը տրամադրում են բացառապես տվյալ սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեությունը սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնում (այսուհետ՝ լիազորված մարմին) հավաստագրած, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները (այսուհետ՝ կազմակերպություն), բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի N Ն որոշման 3-րդ կետով սահմանված դեպքի:

5. Խնամքը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, Հայաստանի Հանրապետությունում բնակվող՝ բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող օտարերկրյա քաղաքացիներին, քաղաքացիություն չունեցող,

ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձանց՝ օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

6. Խնամքը տրամադրվում է անձի (նրա օրինական ներկայացուցչի) համաձայնությամբ, բացառությամբ սույն կետով նախատեսված դեպքի: «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածով նախատեսված դեպքերում և սահմանված կարգով, խնամքը տրամադրվում է առանց տվյալ անձի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության:

## **II. ԽՆԱՄՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄԸ ԵՎ ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ**

7. Խնամքը կարող է տրամադրվել՝

1) տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձի կամ նրա ներկայացուցչի գրավոր դիմումի հիման վրա,

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, խնամակալության և հոգաբարձության մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց ներկայացրած տեղեկությունների, գրավոր և բանավոր դիմումների, ահազանգերի, զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա,

3) խնամք տրամադրող կազմակերպության նախաձեռնությամբ:

8. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո գտնվող կազմակերպության կողմից տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ այդ անձանց բնակության վայրի տարածքը սպասարկող սոցիալական աջակցության տարածքային գործակալություն կամ բաժնի (այսուհետ՝ գործակալություն) ղեկավարի որոշմամբ՝ «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն կարգով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան:

9. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնվող կազմակերպության կողմից տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքը տրամադրվում է այդ կազմակերպության՝ համապատասխան լիազորություն ունեցող պաշտոնատար անձի (կամ մարմնի) կողմից ընդունված անհատական իրավական ակտի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն կարգով, այլ նորմատիվ իրավական ակտերով և կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան:

10. Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձը, խնամք տրամադրելու վերաբերյալ գրավոր դիմումն անձամբ կամ ներկայացուցչի միջոցով կարող է ներկայացնել՝

1) գործակալությանը (իսկ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնի առկայության դեպքում՝ միասնական ընդունարան)՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո գտնվող կազմակերպության կողմից խնամքի տրամադրման համար,



2) խնամք տրամադրող կազմակերպությանը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնվող կազմակերպության կողմից խնամքի տրամադրման համար:

11. Սույն կարգի 10-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված դեպքում, բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատություններում կամ տնային պայմաններում խնամքի տրամադրման համար ներկայացվող դիմումին կից, բացառությամբ սույն կարգի 16-րդ կետով նախատեսված դեպքի, անձը գործակալություն է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) խնամքի տրամադրում հայցող անձի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու դեպքում՝

ա. անձնագիրը կամ նույնականացման քարտը,

բ. նույնականացման քարտ չունենալու դեպքում՝ բնակչության պետական ռեգիստր վարող մարմնի կողմից տեղեկանքի տեսքով հատկացված հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքը, իսկ դրանց բացակայության դեպքում՝ սոցիալական քարտը կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրված՝ սոցիալական քարտ չունենալու մասին տեղեկանքը,

2) խնամքի տրամադրում հայցող անձի՝ Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ հանդիսանալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունքը հաստատող փաստաթուղթը (կացության քարտը), իսկ փախստականի կարգավիճակ ունենալու դեպքում՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը,

3) հաշմանդամության վերաբերյալ տեղեկանքը՝ տրված բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող մարմնի կողմից, եթե անձը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել է որպես հաշմանդամություն ունեցող անձ,

4) կենսաթոշակ ստանալու դեպքում՝ կենսաթոշակ նշանակող իրավասու մարմնից կենսաթոշակի չափի և տեսակի վերաբերյալ համապատասխան տեղեկանքը,

5) անձի բժշկական քարտը՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի համատեղ հրամանով հաստատված ձևին համապատասխան կամ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի N Ն որոշման N3 հավելվածով սահմանված հիվանդություններով հիվանդ չլինելու հանգամանքը հիմնավորող փաստաթուղթ (փաստաթղթեր)՝ տրված համապատասխան բժշկական հաստատության (հաստատությունների) կողմից:

12. Սույն կարգի 10-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված դեպքում, բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ (մասնագիտացված) հաստատություններում խնամքի տրամադրման համար ներկայացվող դիմումին կից, բացառությամբ սույն կարգի 16-րդ կետով նախատեսված դեպքի, անձը գործակալություն է ներկայացնում

սույն կարգի 11-րդ կետի 1-4-րդ ենթակետերով սահմանված համապատասխան փաստաթղթերը, ինչպես նաև՝

1) անձի անգործունակ ճանաչված լինելու դեպքում՝

ա. անգործունակ ճանաչելու մասին դատարանի վճիռը կամ դրա պատճենը,

բ. անձի նկատմամբ խնամակալություն սահմանելու մասին խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշման պատճենը,

2) անձի բժշկական քարտը՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի համատեղ հրամանով հաստատված ձևին համապատասխան կամ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի N Ն որոշման N 3 հավելվածով սահմանված հիվանդություններով (բացառությամբ այդ հավելվածում նշված հոգեկան հիվանդությունների) հիվանդ չլինելու հանգամանքը հիմնավորող փաստաթուղթ (փաստաթղթեր)՝ տրված համապատասխան բժշկական հաստատության (հաստատությունների) կողմից, ինչպես նաև քաղվածք անձի հիվանդության պատմությունից կամ հոգեբուժական դիսպանսերի բժշկական քարտից:

13. Սույն կարգի 10-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված դեպքում, սոցիալական հոգաձույնի ցերեկային կենտրոնում խնամքի տրամադրման համար ներկայացվող դիմումին կից, բացառությամբ սույն կարգի 16-րդ կետով նախատեսված դեպքի, անձը գործակալություն է ներկայացնում սույն կարգի 11-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ ենթակետերով սահմանված համապատասխան փաստաթղթերը:

14. Սույն կարգի 10-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված դեպքում, խնամք տրամադրելու վերաբերյալ դիմումն անձի ներկայացուցչի կողմից ներկայացնելիս, պահանջվում են նաև ներկայացուցչի նույնականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը՝ սույն կարգի 11-րդ կետի 1-ին կամ 2-րդ ենթակետերին համապատասխան, ինչպես նաև՝

1) անձի օրինական ներկայացուցիչը լինելու դեպքում՝ խնամակալը կամ հոգաբարձուն հանդիսանալու փաստը հավաստող համապատասխան փաստաթուղթը,

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանող լիազորագրի հիման վրա անձի ներկայացուցիչը լինելու դեպքում՝ լիազորագիրը, իսկ այն դեպքում, երբ ներկայացուցիչը փաստաբան է՝ նաև փաստաբանական գործունեության արտոնագրի պատճենը:

15. Անձի անգործունակ ճանաչված լինելու դեպքում, սույն կարգի 12-րդ կետում նշված դիմումը ներկայացնում է տվյալ անձի խնամակալը:

16. Խնամքի տրամադրման համար գործակալությանը ներկայացվող դիմումին կից չեն պահանջվում սույն կարգի 11-րդ, 12-րդ և 13-րդ կետերում նշված այն փաստաթղթերը, որոնցում ներառված տվյալներն առկա են համապատասխան մարմինների էլեկտրոնային տեղեկատվական շտեմարաններում (բազաններում):

17. Անձի դիմումը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում, Գործակալության սոցիալական աշխատանքի մասնագետը կատարում է տնային այցելություն՝ տվյալ անձի ընտանիքի կարիքների գնահատման (կենսապայմանների ուսումնասիրության) նպատակով:

18. Տնային այցելություն կատարելուց հետո եռօրյա ժամկետում, գործակալության սոցիալական աշխատանքի մասնագետը տնային այցելության արձանագրությունը՝ անձին խնամք տրամադրելու կամ չտրամադրելու վերաբերյալ եզրակացության հետ միասին, ներկայացնում է գործակալության պետին:

19. Գործակալության պետը, սույն կարգի 18-րդ կետով սահմանված փաստաթղթերի հիման վրա, ոչ ուշ, քան դրանք ստանալուց հետո եռօրյա ժամկետում, ընդունում է որոշում խնամք տրամադրելու կամ խնամքի տրամադրումը մերժելու մասին: Ընդ որում, խնամք տրամադրելու մասին որոշման մեջ նշվում է տրամադրման ենթակա խնամքի տեսակը:

20. Գործակալությունը խնամք տրամադրելու մասին որոշման պատճենն եռօրյա ժամկետում ներկայացնում է լիազորած մարմին:

21. Լիազորած մարմինը գործակալությունից ստացած որոշումների հիման վրա իրականացնում է խնամքի տրամադրում հայցող անձանց հաշվառում, ըստ դիմումների ներկայացման հերթականության (օր, ամիս, տարի) և տրամադրման ենթակա խնամքի տեսակի կազմում է համապատասխան հերթացուցակներ ու համակարգում է այդ անձանց խնամքի տրամադրման գործընթացը: Խնամքի տրամադրում հայցող անձանց հաշվառումն իրականացվում է լիազորած մարմնի ղեկավարի կողմից հաստատված կարգով:

22. Լիազորած մարմինը խնամք տրամադրող կազմակերպություններից ստանալով համապատասխան տեղեկատվություն խնամք տրամադրելու հնարավորության (բնակչության սոցիալական պաշտպանության համապատասխան հաստատությունում կամ սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնում ազատ տեղերի կամ տնային պայմաններում խնամք տրամադրելու հնարավորության) վերաբերյալ, դրա մասին անմիջապես տեղեկացնում է համապատասխան հերթացուցակում առաջին համարը զբաղեցնող անձի խնամքի տրամադրման վերաբերյալ որոշում կայացրած գործակալությանը:

23. Գործակալությունը լիազորած մարմնից ստանալով սույն կարգի 22-րդ կետով նախատեսված տեղեկատվությունը, ոչ ուշ, քան երեք օրվա ընթացքում անձին ուղեգրում է (տրամադրում է ուղեգիր) խնամք տրամադրող համապատասխան կազմակերպություն՝ այդ մասին մեկօրյա ժամկետում իրազեկելով լիազորած մարմնին: Անձի կողմից ներկայացված գրավոր դիմումի հիման վրա՝ սույն կարգի 25-րդ կետում նշված դեպքերում, ուղեգրումը կարող է հետաձգվել մինչ վեց ամիս ժամկետով, ինչի վերաբերյալ գործակալությանը լիազորած մարմնին տեղեկացնում է համապատասխան դիմումը ստանալուց հետո եռօրյա ժամկետում:

24. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում խնամքի տրամադրման համար, անձը կարող է բնակչության սոցիալական պաշտպանության համապատասխան հաստատություն ներկայանալ սույն կարգի 23-րդ կետով սահմանված ուղեգիրը ստանալու օրվանից յոթօրյա ժամկետում: Սույն կետով սահմանված ժամկետում բնակչության սոցիալական պաշտպանության համապատասխան հաստատություն չներկայանալու դեպքում, ոչ ուշ, քան ուղեգրի ժամկետը լրանալու օրվանից հետո յոթ օրվա ընթացքում, անձն ուղեգիրը վերադարձնում է գործակալություն՝ գրավոր տեղեկացնելով բնակչության սոցիալական

պաշտպանության հաստատություն չներկայանալու պատճառների մասին: Գործակալությունն անձի կողմից ուղեգիրը վերադարձնելու մասին եռօրյա ժամկետում իրազեկում է լիազորած մարմնին:

25. Այն դեպքում, երբ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն անձի չներկայանալը պայմանավորված է եղել սույն կետում նշված հարգելի պատճառներով, գործակալությունն անձին տրամադրում է նոր ուղեգիր: Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն չներկայանալու հարգելի պատճառներ են համարվում՝

1) խնամքի տրամադրում հայցող անձի հիվանդությունը.

2) տնային (ամբուլատոր) պայմաններում խնամքի տրամադրում հայցող անձի կողմից ընտանիքի հիվանդ անդամի խնամքը.

3) խնամքի տրամադրում հայցող անձի կողմից հիվանդանոցային բուժական հաստատությունում (ստացիոնարում) գտնվող՝ ընտանիքի անդամ հանդիսացող մինչև 3 տարեկան երեխայի կամ մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխայի խնամքը, այն դեպքում, երբ երեխայի ծնողը (կամ խնամակալը, հոգաբարձուն) հիվանդության կամ ընտանիքի այլ հիվանդ անդամի հետ հիվանդանոցային բուժական հաստատությունում (ստացիոնարում) գտնվելու պատճառով ի վիճակի չէ երեխայի խնամքն իրականացնել.

4) ուղեգիրը ստանալու օրվանից հետո յոթ օրվա ընթացքում խնամքի տրամադրում հայցող անձի հետ մերձավոր ազգակցությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) մահվան դեպքը, ինչը պետք է հավաստվի քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից տրված մահվան վկայականով և համապատասխան այնպիսի այլ փաստաթղթերով (ծննդյան վկայական, անձնագիր, ամուսնության վկայական), որոնցով հավաստվում է խնամքի տրամադրում հայցող և մահացած անձանց միջև մերձավոր ազգակցությունը.

5) արտակարգ և անկանխատեսելի այնպիսի հանգամանքները (անհաղթահարելի ուժ), ինչպիսիք են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, տեխնածին և տարերային այլ աղետները, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, որոնք օբյեկտիվորեն անհնար են դարձրել բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն անձի ներկայանալը:

26. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն չներկայանալու վերաբերյալ գործակալությանը հարգելի պատճառներ չներկայացնելու կամ ուղեգրի ժամկետը լրանալու օրվանից հետո յոթ օրվա ընթացքում այն գործակալությանը չվերադարձնելու դեպքում, գործակալությունն այդ մասին եռօրյա ժամկետում տեղեկացնում է լիազորած մարմնին: Սույն կետով սահմանված տեղեկատվությունը ստանալուց հետո մեկ օրվա ընթացքում, լիազորած մարմինը տվյալ անձին հանում է խնամքի տրամադրում հայցող անձանց հաշվառումից և այդ մասին տեղեկացնում է գործակալությանը:

27. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, խնամակալության և հոգաբարձության մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց ներկայացրած տեղեկությունների, գրավոր և բանավոր

դիմումների, ահազանգերի, զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների և այլ աղբյուրների միջոցով անձի անօգնական վիճակի վերաբերյալ տեղեկություններ ստանալու դեպքում, գործակալության կողմից անհապաղ կազմակերպվում է իրավիճակի ուսումնասիրություն՝ տեղեկատվության հավաստիությունը ճշտելու նպատակով: Անձի անօգնական վիճակի վերաբերյալ տեղեկատվությունը հավաստվելու դեպքում, գործակալության ղեկավարը նույն օրն ընդունում է խնամք տրամադրելու մասին որոշում և կազմակերպում անձին անհրաժեշտ օգնության տրամադրման և բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն տեղափոխելու աշխատանքները՝ այդ մասին մեկ օրվա ընթացքում տեղեկացնելով լիազորած մարմնին:

28. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության, գործակալության, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, խնամակալության և հոգաբարձության մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց ներկայացրած տեղեկությունների, գրավոր և բանավոր դիմումների, ահազանգերի, զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների և այլ աղբյուրների միջոցով անձի անօգնական վիճակի վերաբերյալ տեղեկություններ ստանալու դեպքում, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո գտնվող կազմակերպությունն այդ մասին անմիջապես տեղեկացնում է գործակալությանը՝ սույն կարգի 27-րդ կետով սահմանված միջոցառումների իրականացման նպատակով: Սույն կետում նշված տեղեկատվությունը ոչ աշխատանքային օրերին կամ ժամերին ստանալու կամ անօգնական վիճակում հայտնված անձի կողմից ոչ աշխատանքային օրերին կամ ժամերին կազմակերպությանը դիմելու դեպքում, կազմակերպությունն անհապաղ ձեռնարկում է անձին անհրաժեշտ օգնության և խնամքի տրամադրման համար անհրաժեշտ միջոցառումները, այդ մասին մեկ օրվա ընթացքում տեղեկացնելով լիազորած մարմնին և գործակալությանը՝ անձի ուղեգրումը կազմակերպելու համար:

29. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնվող կազմակերպությունը կարող է իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված միջոցառումներ՝ սեփական նախաձեռնությամբ տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման նպատակով: Անօգնական վիճակում գտնվող անձի կողմից խնամքի տրամադրումից հրաժարվելու դեպքում, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնվող կազմակերպությունը տվյալ անձի մասին իրեն հայտնի դարձած տեղեկատվությունն անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում տրամադրում է գործակալությանը՝ «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված եզրակացության կազմման և դրա հիման վրա՝ այդպիսի անհրաժեշտության առկայության դեպքում, խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից անձին բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն տեղավորելու մասին որոշման ընդունման նպատակով:

### III. ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ՄԵՐԺԵԼԸ

30. Գործակալությունը մերժում է տնային պայմաններում, բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատություններում ու սոցիալական հոգաձության ցերեկային կենտրոններում խնամքի տրամադրումը՝

1) եթե խնամքի տրամադրում հայցող անձը տառապում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի N Ն որոշման N3 հավելվածով սահմանված հիվանդությունների ցանկում ընդգրկված որևէ հիվանդությամբ՝ այդ մասին մասնագիտացված բժշկական հաստատության տված եզրակացության հիման վրա.

2) խնամքի տրամադրման համար օրենքով սահմանված բավարար հիմքերի բացակայության դեպքում.

3) առանց հարգելի պատճառների, սույն կարգի 24-րդ կետով սահմանված ժամկետում բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն չներկայանալու դեպքում.

4) Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ դեպքերում:

31. Գործակալությունը մերժում է բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ (մասնագիտացված) հաստատություններում խնամքի տրամադրումը՝

1) եթե խնամքի տրամադրում հայցող անձը տառապում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի N Ն որոշման N3 հավելվածով սահմանված հիվանդությունների ցանկում ընդգրկված որևէ հիվանդությամբ (բացառությամբ այդ հավելվածում նշված հոգեկան հիվանդությունների), այդ մասին մասնագիտացված բժշկական հաստատության տված եզրակացության հիման վրա.

2) սույն կարգի 30-րդ կետի 2-րդ, 3-րդ և 4-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում:

32. Սույն կարգի 30-րդ և 31-րդ կետերի 1-ին ենթակետերում նշված հիմքերով խնամքի տրամադրումը մերժելու դեպքում, գործակալությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում միջնորդում է առողջապահության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնին՝ անձի (նրա օրինական ներկայացուցչի) համաձայնությամբ նրա բուժման գործընթացը մասնագիտացված բժշկական հաստատությունում կազմակերպելու համար:

### IV. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԱԾՈՒԹՅԱՆ ՑԵՐԵԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

33. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները և սոցիալական հոգաձության ցերեկային կենտրոնները պետք է ապահովված լինեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները բավարարող կոմունալ, սանիտարահիգիենիկ և հակահրդեհային անվտանգության անհրաժեշտ պայմաններով: Հայաստանի Հանրապետության կառավարության

որոշմամբ կարող են սահմանվել բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների և սոցիալական հոգաձության ցերեկային կենտրոնների գործունեության համար անհրաժեշտ ընդհանուր և բնակելի մակերեսին, անձնակազմին (աշխատողների քանակին և հաստիքներին), միաժամանակյա խնամք ստացողների առավելագույն քանակին, նրանց տրամադրվող սննդի չափաքանակին, դրա էներգետիկ արժեքին, հագուստի, սպիտակեղենի, կոշկեղենի, անկողնային և անձնական հիգիենայի պարագաների չափորոշիչներին, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների և սոցիալական հոգաձության ցերեկային կենտրոնների անվտանգության ապահովմանը և այլ պայմաններին ներկայացվող պահանջներ:

34. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունը և սոցիալական հոգաձության ցերեկային կենտրոնը պետք է ունենան ներքին կարգապահական կամ համակեցության կանոններ (այսուհետ՝ կանոններ)՝ հաստատված խնամք տրամադրող կազմակերպության համապատասխան լիազորություններով օժտված մարմնի (կամ պաշտոնատար անձի) կողմից: Կանոնները կազմակերպության կողմից ենթակա են ներկայացման լիազորած մարմնին՝ տվյալ սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեությունը լիազորած մարմնում հավաստագրելու համար ներկայացվող դիմումին կից:

## **V. ՏՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ**

35. Տնային պայմաններում խնամքը տրամադրվում է դրա կարիքն ունեցող, տարեց, չաշխատող (բացառությամբ տնային պայմաններում աշխատող) անձանց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց՝ նրանց անհատական սոցիալական ծրագրի համաձայն՝ հիմնականում սոցիալական ծառայությունների հետևյալ ձևերով.

- 1) կենցաղային սպասարկում.
- 2) բժշկական օգնություն և սպասարկում.
- 3) սոցիալ-հոգեբանական օգնություն.
- 4) խորհրդատվական օգնություն:

36. Խնամքը տրամադրվում է ցերեկային ժամերին՝ ժամը 10:00-18:00-ն ընկած ժամանակահատվածում, անձի բնակության վայրում, նրա գնահատված սոցիալական կարիքներին համապատասխան:

37. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո գտնվող կամ լիազորած մարմնի հետ կնքած պայմանագրի հիման վրա տնային պայմաններում խնամք տրամադրող կազմակերպությունը, սույն կարգի 23-րդ կետով սահմանված ուղեգիրը ստանալուց հետո յոթօրյա ժամկետում, կազմակերպության սոցիալական աշխատողից, բժշկից և հոգեբանից կազմված մասնագիտական խմբի միջոցով իրականացնում է տնային այցելություն, որի արդյունքում անձի հետ կնքում է համապատասխան պայմանագիր՝ տնային պայմաններում խնամքի տրամադրման վերաբերյալ:

38. Լիազորած մարմնի հետ համապատասխան պայմանագիր չկնքած՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո

չգտնվող կազմակերպությունները տնային խնամքը կարող են տրամադրել սեփական նախաձեռնությամբ, առանց սույն կարգի 23-րդ կետով սահմանված ուղեգրի առկայության :

39. Տնային պայմաններում խնամքի տրամադրումը դադարեցվում է՝

1) խնամք ստացող անձի (նրան ներկայացուցչի) գրավոր դիմումի հիման վրա.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի N Լ որոշման N3 հավելվածով սահմանված հիվանդությունների ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով խնամք ստացող անձի հիվանդանալու դեպքում՝ մասնագիտացված բժշկական հաստատության եզրակացության հիման վրա.

3) խնամք ստացող անձի՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն կամ շուրջօրյա լրիվ խնամք տրամադրող այլ կազմակերպություն ընդունվելու դեպքում.

4) տնային պայմաններում խնամք տրամադրելու հիմքերի վերացման դեպքում.

5) խնամք ստացող անձի մահվան դեպքում.

6) Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ դեպքերում:

## **VI. ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

40. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ապահովում են շուրջօրյա լրիվ խնամքով:

41. Բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատություններում խնամքը տրամադրվում է դրա կարիքն ունեցող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված՝ սույն կետի 1-4-րդ ենթակետերում նշված անձանց, բացառությամբ սույն կարգի 42-րդ կետում նշված անձանց.

1) տարեց միայնակ չաշխատող կենսաթոշակառուներին,

2) տասնութ տարին լրացած հաշմանդամություն ունեցող անձանց,

3) ընտանիքում աշխատունակ անդամ չունեցող տարեց անձանց,

4) տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձանց՝ ընտանիքում բռնության, սոցիալական մեկուսացվածության կամ բարոյահոգեբանական անհամատեղելի իրավիճակի առկայության դեպքում:

42. Բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ (մասնագիտացված) հաստատություններում խնամքը տրամադրվում է դրա կարիքն ունեցող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված՝ 18 տարին լրացած քրոնիկ հոգեկան հիվանդությամբ կամ խոր մտավոր հետամնացությամբ հաշմանդամություն ունեցող անձանց կամ ծերունական փսիխոզով կամ ծանր արտահայտված սկլերոզով անձանց:

43. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնվող՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունը կարող է խնամք տրամադրել սույն կարգի 41-րդ և 42-րդ կետերում չնշված՝ տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող այլ անձանց:

44. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները կազմակերպում են այնտեղ բնակվող (խնամվող) անձանց՝



- 1) առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը.
- 2) սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրումը.
- 3) իրավական խորհրդատվության տրամադրումը.
- 4) պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով ապահովումը.
- 5) բժշկասոցիալական փորձաքննությունը.
- 6) հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություն ուղեգրելը.
- 7) ազատ ժամանցը.
- 8) կրթաուսումնական կամ ուսումնադաստիարակչական ծառայությունները.
- 9) աշխատանքային թերապիան:

45. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները այնտեղ բնակվող (խնամվող) անձանց տրամադրում են՝

- 1) սնունդ՝ օրական առնվազն երեք անգամ, ընդ որում, հատուկ սննդակարգի կարիք ունեցող անձանց համար, բժշկի ցուցումով նշանակվում է դիետիկ սնունդ.
- 2) մահճակալ և անհրաժեշտ այլ կահույք.
- 3) հագուստ, սպիտակեղեն, կոշիկեղեն՝ տարիքասեռային առանձնահատկություններին և եղանակային պայմաններին համապատասխան.
- 4) անկողնային պարագաներ.
- 5) անձնական հիգիենայի պարագաներ (սրբիչ, օճառ, ատամի մածուկ, խոզանակ, սափրվելու պարագաներ և այլն):

46. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններն իրականացնում են տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության և խնամքի տրամադրմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն կարգով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ գործառույթներ:

47. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո գտնվող՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն անձի ընդունելությունը ձևակերպվում է այդ հաստատության ղեկավարի հրամանով: Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնվող՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն անձի ընդունելությունը ձևակերպվում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում խնամք տրամադրող կազմակերպության՝ համապատասխան լիազորություն ունեցող պաշտոնատար անձի հրամանով:

48. Անձին բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն ընդունելիս, այդ հաստատության համապատասխան իրավասություններ ունեցող աշխատողը (կամ պաշտոնատար անձը) վերցնում է նրա հագուստը և անձնական իրերը՝ ախտահանման նպատակով:

49. Անձի՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն տեղափոխվելուց անմիջապես հետո, նրան գնում է այդ հաստատության բժիշկը, որոշում ընդունելության համար բժշկական հակացուցումների առկայությունը կամ բացակայությունը և տալիս եզրակացություն տվյալ անձին սանիտարական մշակման ուղարկելու և հատուկ առանձնացված (կարանտինի) սենյակում տեղավորելու

անհրաժեշտության (կամ բացակայության) վերաբերյալ: Ժամը 18.00-ից հետո կամ ոչ աշխատանքային օրերին բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն տեղափոխվելու դեպքում, անձը տեղավորվում է հատուկ առանձնացված (կարանտինի) սենյակում՝ մինչև բժշկի կամ համապատասխան բժշկական հաստատության կողմից նրա առողջական վիճակի մասին եզրակացության տրամադրումը: Սույն կետով նախատեսված դեպքերում, անձը կարող է հատուկ առանձնացված (կարանտինի) սենյակում տեղավորվել ոչ ավելի, քան երեք օրով:

50. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն չի թույլատրվում բերել հրազեն, դրան համալրող դետալներ, սառը զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր, պայթուցիկ սարքեր, դյուրավառ կամ այրիչ նյութեր, ռադիոակտիվ նյութեր, թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր (բացառությամբ բժշկի կողմից նշանակված հոգեմետ (հոգեներգործուն) դեղամիջոցների), ինչպես նաև շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող այլ սարքեր: Սույն կետում նշված առարկաների կամ նյութերի հայտնաբերման դեպքում, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության համապատասխան լիազորություններով օժտված աշխատողը (կամ պաշտոնատար անձը) այդ մասին անմիջապես իրազեկում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը:

51. Սույն կարգի 47-րդ կետում նշված հրամանի ընդունումից անմիջապես հետո, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության համապատասխան լիազորություններով օժտված աշխատողը (կամ պաշտոնատար անձը), ընդունված անձի մասին տվյալները գրանցում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության հաշվառման մատյանում, որի ձևը հաստատում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության ղեկավարը կամ խնամք տրամադրող կազմակերպության՝ համապատասխան լիազորություն ունեցող պաշտոնատար անձը (կամ մարմինը):

52. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության հաշվառման մատյանը կարող է վարվել ինչպես փաստաթղթային (թղթային կրիչով), այնպես էլ էլեկտրոնային եղանակով՝ անհրաժեշտ տվյալները և տեղեկությունները համակարգչում մուտքագրելու միջոցով: Ընդ որում, հաշվառման մատյանը միաժամանակ փաստաթղթային և էլեկտրոնային եղանակներով կազմելու և վարելու դեպքում, դրանցում ներառված տվյալները և տեղեկություններն ամբողջությամբ պետք է համապատասխանեն միմյանց: Փաստաթղթային եղանակով վարվող հաշվառման մատյանը պետք է լինի համարակալված և էջակարված: Փաստաթղթային եղանակով վարվող հաշվառման մատյանը լրացվում է մուգ կապույտ կամ սև գույնի թանաքով գրիչով, ընթեռնելի ձեռագրով, առանց անհարկի հապավումներ և ջնջումներ կատարելու: Սխալ գրառման դեպքում այն երկու կողմից առնվում է փակագծի մեջ, որից հետո կատարվում է ճիշտ գրառումը և տվյալ էջի աջ անկյունում հաշվառման մատյանում գրառում կատարող համապատասխան աշխատողի (պաշտոնատար անձի) կողմից լրացվում են «ուղղումը կատարված է իմ կողմից» բառերը և ուղղումը հավաստվում է ստորագրությամբ:

53. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) յուրաքանչյուր անձի համար, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության սոցիալական աշխատանքի մասնագետը կամ համապատասխան լիազորություններով օժտված այլ աշխատողը (կամ պաշտոնատար անձը) լրացնում է հաշվառման քարտ, որտեղ գրանցում է այդ հաստատությունում բնակվող (խնամվող) անձի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝

- 1) անունը, հայրանունը, ազգանունը,
- 2) ծննդյան տարեթիվը,
- 3) սեռը,
- 4) անձը հաստատող փաստաթղթի տեսակը,
- 5) անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը,

6) հանրային ծառայությունների համարանիշը կամ սոցիալական քարտի համարը կամ դրանք չունենալու մասին տեղեկանքի համարը,

7) մինչ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն տեղափոխվելը տվյալ անձի հաշվառման հասցեն, իսկ հաշվառման մեջ չգտնվելու դեպքում՝ վերջին կամ նախկին հաշվառման հասցեն,

8) ընտանեկան դրությունը,

9) բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն ընդունման և դուրսգրման օրը, ամիսը, տարին:

54. Հաշվառման քարտում կարող են լրացվել նաև սույն կարգի 53-րդ կետում չնշված՝ անձի վերաբերյալ այլ անհրաժեշտ տվյալներ:

55. Անձին բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն կրկին անգամ ընդունելու (դուրս գրելու) դեպքում, նրա հաշվառման քարտում այդ մասին կատարվում է համապատասխան գրառում և անհրաժեշտության դեպքում փոփոխվում են հաշվառման քարտում գրանցված տվյալները:

56. Հաշվառման քարտի ձևը հաստատում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության ղեկավարը կամ խնամք տրամադրող կազմակերպության՝ համապատասխան լիազորություն ունեցող պաշտոնատար անձը (կամ մարմինը): Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում անձի բնակվելու (խնամվելու) ողջ ժամանակահատվածում, տվյալ անձի հաշվառման քարտը պահվում է քարտարանում, իսկ անձին բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունից դուրս գրելու դեպքում, հաշվառման քարտը պահվում է տվյալ անձի անձնական գործում:

57. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունը կազմակերպում է այնտեղ բնակվող (խնամվող) անձանց առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը՝ նրանց այնտեղ բնակվելու (խնամվելու) ողջ ժամանակահատվածում: Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) անձանց առաջնային բժշկական օգնությունն իրականացնում է այդ հաստատության բժիշկը և բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության գտնվելու վայրի համապատասխան բժշկական հաստատությունը: Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) յուրաքանչյուր անձի համար լրացվում է բժշկական քարտ, որտեղ

գրանցվում են նրա անձնական տվյալները, ինչպես նաև կատարված բժշկական զննության, իրականացված կլինիկալաբորատոր հետազոտությունների արդյունքները, ցույց տրված բժշկական օգնությունը և անհրաժեշտ այլ տվյալներ:

58. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության բժիշկը յուրաքանչյուր օր կազմակերպում է այնտեղ բնակվող (խնամվող) բոլոր անձանց համայն և նրանց ցույց տալիս անհրաժեշտ բուժօգնություն, իսկ ոչ ուշ, քան եռամսյակը մեկ անգամ իրականացնում է այդ հաստատությունում բնակվող (խնամվող) բոլոր անձանց բուժզննում և կատարում գրառում նրանց բժշկական քարտերում:

59. Անձին բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն ընդունելիս, ինչպես նաև անձի՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվելու (խնամվելու) ժամանակահատվածում զննման արդյունքում կամ համապատասխան բժշկական հաստատության կողմից տրամադրված եզրակացության համաձայն շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդության կասկածի կամ բժշկական այլ հակացուցումների հայտնաբերման դեպքում, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության բժիշկը կամ համապատասխան լիազորություններով օժտված այլ աշխատողը (կամ պաշտոնատար անձր) անձին տեղավորում է հատուկ առանձնացված (կարանտինի) սենյակում, ձեռնարկում անհրաժեշտ միջոցներ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) այլ անձանց հետ տվյալ անձի անմիջական շփումը բացառելու համար, մեկօրյա ժամկետում այդ մասին տեղեկացնում է առողջապահության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի պետական հակահամաճարակային տեսչության տարածքային կենտրոն և ըստ անհրաժեշտության, ապահովում անձի տեղափոխումը մասնագիտացված բժշկական հաստատություն:

60. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունը, ըստ անհրաժեշտության, կազմակերպում է այնտեղ բնակվող (խնամվող) անձանց՝ համապատասխան բժշկական հաստատություններ ուղեգրման գործընթացը: Խնամվողին առկա (ստացիոնար) բժշկական հաստատություն տեղափոխելու դեպքում, բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատությունը կազմակերպում է նրա սննդի ապահովումը, իսկ բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ (մասնագիտացված) հաստատությունը՝ նաև խնամքը:

61. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության սոցիալական աշխատողը, սույն կարգի 47-րդ կետում նշված հրամանի ընդունումից հետո, եռօրյա ժամկետում, գնահատում է անձի սոցիալական կարիքները, իր իրավասությունների շրջանակներում իրականացնում է նրա անհատական ծրագրով նախատեսված միջոցառումները, դրանում նախատեսված ժամկետներում մասնակցում է մասնագիտական քննարկումներին և տվյալ անձի սոցիալական կարիքներին համապատասխան, նրան տրամադրում է սոցիալական ծառայություններ:

62. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) անձանց կարող են այցելել նրանց ընտանիքի անդամները, ազգականներն ու ծանոթները, աջակցող ցանցի անդամները (նրանց ներկայացուցիչները), պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների

ներկայացուցիչներ և անձինք: Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) անձանց կողմից սույն կետում նշված անձանց ընդունելությունն իրականացվում է կանոններով սահմանված ընթացակարգին համապատասխան:

63. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) անձինք, այդ հաստատության ղեկավարի հրամանով կարող են տարվա մեջ առավելագույնը 90 օր ժամկետով դուրս գրվել բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունից, իրենց ազգականներին հյուրընկալվելու նպատակով՝ իրենց կամ իրենց ազգականի գրավոր դիմումի հիման վրա: Հետ վերադարձի ժամանակ անձը ներկայացնում է տեղեկանք բնակավայրում վարակիչ հիվանդությունների ներբերման կանխարգելման մասին՝ առողջապահության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի պետական հակահամաճարակային տեսչության տարածքային կենտրոնից:

64. Բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատությունում բնակվող (խնամվող) անձը, հոգեկան առողջության խնդիրներ ունենալու դեպքում՝ հոգեկան առողջության վերաբերյալ հոգեբույժի եզրակացության հիման վրա, տեղափոխվում է բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ (մասնագիտացված) հաստատություն կամ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի համար նախատեսված այլ հաստատություն:

65. Բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատության ղեկավարը, սույն կարգի 64-րդ կետում նշված եզրակացությունը ստանալուց հետո եռօրյա ժամկետում, անձի ընտանիքի անդամներին (առկայության դեպքում) տեղեկացնում է բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ (մասնագիտացված) հաստատություն կամ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի համար նախատեսված այլ հաստատություն անձի տեղափոխման անհրաժեշտության մասին: Անձի հոգեկան խանգարման դեպքում, բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատության ղեկավարը սույն կետով սահմանված ժամկետում տեղեկացնում է նաև այդ հաստատության գտնվելու վայրի խնամակալության և հոգաբարձության մարմնին՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ դիմումը դատարան ներկայացնելու համար:

66. Անձի ընտանիքի անդամների բացակայության կամ բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատությունից անձին տեղափոխելուց նրանց հրաժարվելու դեպքում, բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատության ղեկավարը դիմում է գործակալությանը և այդ հաստատության գտնվելու վայրի խնամակալության և հոգաբարձության մարմնին՝ սույն կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան անձին բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ (մասնագիտացված) հաստատություն կամ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի համար նախատեսված այլ հաստատություն տեղափոխելու գործընթացը կազմակերպելու համար:

67. Մինչև անձին բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ (մասնագիտացված) հաստատություն տեղափոխելը, բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատությունը շարունակում է տվյալ անձին խնամքի տրամադրումը, եթե առկա չէ մասնագիտացված բժշկական հաստատություն տեղափոխելու անհրաժեշտություն և տվյալ անձի՝ բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատությունում գտնվելը վտանգ չի ներկայացնում այնտեղ բնակվող (խնամվող) այլ անձանց համար:

68. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) անձի մահվան դեպքում, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության համապատասխան լիազորություններով օժտված աշխատողը (պաշտոնատար անձը) այդ մասին անհապաղ տեղեկացնում է շտապ բժշկական օգնության ծառայությանը՝ մահվան փաստն արձանագրելու, դիակը դիահերձարան տեղափոխելու և սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը իրազեկելու համար, ինչպես նաև հանգուցյալի ընտանիքի անդամներին կամ այլ ազգականներին (առկայության դեպքում)՝ հուղարկավորությունը կազմակերպելու համար: Այն դեպքում, երբ մահացած անձը չունի ընտանիքի անդամներ կամ այլ ազգականներ կամ նրանք հրաժարվում են կազմակերպել հուղարկավորությունը կամ մահվան մասին տեղեկացվելուց հետո երկօրյա ժամկետում չեն ներկայանում բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն, հուղարկավորությունը կազմակերպվում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության կողմից: Այս դեպքում, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունն ապահովում է անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացումը՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնում անձի մահը օրենքով սահմանված կարգով գրանցելու նպատակով:

## **VII. ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԱԾՈՒԹՅԱՆ ՑԵՐԵԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ**

69. Սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնը (այսուհետ՝ կենտրոն) տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքը տրամադրում է կենտրոնում, ցերեկային ժամերին՝ ժամը 09:00-18:00-ն ընկած ժամանակահատվածում:

70. Ելնելով խնամքի տրամադրում հայցող անձանց առանձնահատուկ կարիքներից, տարիքային կազմից, իրենց կանոնադրությամբ ամրագրված նպատակներից և այլ գործոններից, կենտրոնները կարող են ունենալ տարատեսակ ուղղվածություններ՝ նախատեսված տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց առանձին խմբերի (տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց, հոգեկան առողջության կամ մտավոր խնդիրներ ունեցող անձանց, այլ սոցիալական խմբերի) համար:

71. Կենտրոնում խնամքը տրամադրվում է սոցիալական աշխատողի (դեպք վարողի) կազմած անհատական սոցիալական ծրագրի հիման վրա՝ անձի գնահատված սոցիալական կարիքներին համապատասխան:

72. Կենտրոնում խնամքը տրամադրվում է հիմնականում հետևյալ սոցիալական ծառայությունների ձևով.

1) սնունդ՝ օրական մեկ անգամ.

2) սոցիալ-հոգեբանական օգնություն.

3) իրավական խորհրդատվություն.

4) հաշմանդամություն ունեցող անձի աշխատանքային վերականգնման անհատական ծրագրի կազմում, դրանով նախատեսված միջոցառումների իրականացում.

5) արվեստի միջոցով թերապիա.

6) օկուպացիոն թերապիա (շտկիչ վարժանքներով թերապիա):

73. Կենտրոնը կազմակերպում է խնամք ստացողների՝

1) աշխատանքային թերապիան.

2) առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը.

3) ժամանցը, ինչպես նաև մշակութային միջոցառումներ.

4) սոցիալական ներառմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ միջոցառումներ:

74. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո գտնվող կամ լիազորված մարմնի հետ համապատասխան պայմանագիր կնքած կազմակերպությունը կենտրոնում խնամքը տրամադրում է գործակալության կողմից տրված՝ սույն կարգի 23-րդ կետով սահմանված ուղեգրի հիման վրա:

75. Լիազորված մարմնի հետ համապատասխան պայմանագիր չկնքած՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնվող կազմակերպությունը կենտրոնում խնամքը կարող է տրամադրել սեփական նախաձեռնությամբ, առանց սույն կարգի 23-րդ կետով սահմանված ուղեգրի առկայության :

76. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո գտնվող կենտրոններում անձի ընդունելությունը ձևակերպվում է կենտրոնի ղեկավարի հրամանով: Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնվող կենտրոններում անձի ընդունելությունը ձևակերպվում է կենտրոնում խնամք տրամադրող կազմակերպության՝ համապատասխան լիազորություն ունեցող պաշտոնատար անձի հրամանով:

77. Կենտրոնում խնամքի տրամադրումը դադարեցվում է՝

1) խնամք ստացող անձի (նրան ներկայացուցչի) գրավոր դիմումի հիման վրա.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի N Ե որոշման N3 հավելվածով սահմանված հիվանդությունների ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով խնամք ստացող անձի հիվանդանալու դեպքում՝ մասնագիտացված բժշկական հաստատության եզրակացության հիման վրա.

3) խնամք ստացող անձի՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն կամ շուրջօրյա լրիվ խնամք տրամադրող այլ կազմակերպություն ընդունվելու դեպքում.

4) կենտրոնում խնամք տրամադրելու հիմքերի վերացման դեպքում.

5) խնամք ստացող անձի մահվան դեպքում.

6) ալկոհոլ կամ թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր օգտագործած վիճակում խնամք ստացող անձի կողմից կենտրոն այցելելու կամ դրանք կենտրոնում օգտագործելու կամ կենտրոնի այլ կանոնները մեկ տարվա ընթացքում երկու անգամից ավելի խախտելու դեպքում.

7) Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ դեպքերում:

### **VIII. ԼԻԱԶՈՐԱԾ ՄԱՐՄՆԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ**

78. Խնամք տրամադրող կազմակերպությունները, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերում և կարգով, լիազորած մարմնին են ներկայացնում խնամքի տրամադրման մասին տեղեկատվություն:

79. Լիազորած մարմինը ստեղծում և վարում է խնամք ստացող անձանց հաշվառման տեղեկատվական համակարգ՝ լիազորած մարմնի ղեկավարի կողմից հաստատված կարգով:

80. Սույն կարգով նախատեսված դեպքերում Գործակալության և լիազորած մարմնի միջև տեղեկատվության փոխանակությունը և փաստաթղթերի առաքումն իրականացվում է գրավոր կերպով՝ փոստային առաքմամբ կամ առձեռն հանձնելու միջոցով, կամ էլեկտրոնային փոստի միջոցով կամ առցանց եղանակով՝ սոցիալական աջակցության բնագավառի տեղեկատվական շտեմարանների միջոցով, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:



**Ց Ա Ն Կ**

**ՏԱՐԵՑ ԵՎ (ԿԱՄ) ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԽՆԱՄՔԻ  
ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

1. Հոգեկան խանգարումներ, բացառությամբ բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ (մասնագիտացված) հաստատություն ընդունվելու դեպքերի.
2. քրոնիկ ալկոհոլամոլություն կամ թմրամոլություն.
3. մաշկային վարակիչ հիվանդություն, սեռավարակներ՝ հիվանդության վարակի շրջանում.
4. օնկոլոգիական հիվանդություններով՝ դեկոմպենսացիայի շրջանում, բացառությամբ հոսպիսային օգնության տրամադրման դեպքերի.
5. ինֆեկցիոն հիվանդություններ՝ հիվանդության սուր շրջանում,
6. տուբերկուլոզ՝ հիվանդության վարակի շրջանում:

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ «ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

	<b>Իրավական ակտի հիմնավորումը</b>
<b>1.</b>	<b>Անհրաժեշտությունը</b>
	<p>«Խնամքի տրամադրման կարգը և պայմանները սահմանելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ նախագիծ) ընդունումը պայմանավորված է 2014թ. դեկտեմբերի 17-ին Հայաստանի Հանրապետության ԱԺ-ի կողմից ընդունված «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ Օրենք) ամրագրված՝ խնամք տրամադրելու հետ կապված հարաբերությունները նոր մոտեցմամբ և դրանք Օրենքի դրույթներին համապատասխան կարգավորելու անհրաժեշտությամբ:</p> <p>Մասնավորապես, սույն որոշմամբ ամրագրված են խնամքի տրամադրման տեսակները, ձևերը, խնամք տրամադրող հաստատությունները, որոնք ծառայություններ են տրամադրում տարեցներին, հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց, առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին:</p> <p>Ի տարբերություն ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 7-ի N1874-Ն որոշման, սույն որոշմամբ կանոնակարգվում են նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին մատուցվող խնամքի ծառայությունները, այսինքն՝ մեկտեղել տարբեր սոցիալական խմբերին տրամադրվող, սակայն նույնաբովանդակ ծառայությունները մեկ որոշման մեջ, ինչը ավելի կոյուրացնի իրավական ակտի գործնական կիրարկումը:</p>
<b>2.</b>	<b>Ընթացիկ իրավիճակը և խնդիրները</b>
	<p>Ներկա դրությամբ տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 7-ի «Ծեր և հաշմանդամ քաղաքացիներին խնամքի տրամադրման կարգն ու ծեր և հաշմանդամ քաղաքացիներին խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու մասին» N 1874-Ն որոշմամբ: Իսկ երեխաների խնամքի տրամադրման հարաբերությունները Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 9-ի «Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունում (մանկատուն, գիշերօթիկ) երեխաների տեղավորման կարգը հաստատելու մասին» N 1735-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 7-ի «Երեխաներին ցերեկային խնամք տրամադրելու կարգը հաստատելու մասին» N 1877-Ն որոշումներով:</p> <p>Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման</p>

	<p>գործող կարգի համեմատ սույն նախագիծն ավելի մանրամասն է շարադրում խնամք տրամադրելու համար դիմելու կարգը՝ միասնական ընդունարանների ստեղծման լույսի ներքո, սահմանում խնամքի տրամադրման մասին որոշում կայացնելը, տեղեկատվության փոխանակման կարգը, ավելացվել է նոր բաժին՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններին և սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններին ներկայացվող ընդհանուր պահանջները և ընդհանրապես առավել հստակեցվել են սոցիալական ծառայություններ տրամադրող մարմինների և բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների կողմից իրականացվող գործառույթները և ժամկետները:</p> <p>Ներկայում բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի, հատուկ (մասնագիտացված), խնամքի գիշերօթիկ հաստատություններ երեխաները ուղղորդվում են մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) եզրակացության հիման վրա, իսկ ուղեգրումը խնամք տրամադրող կազմակերպություններ կատարում է նախարարությունը. առաջարկվող նախագծով երեխաները ուղղորդվում են մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) եզրակացության, ինչպես նաև սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության եզրակացության հիման վրա, իսկ ուղեգրումը խնամք տրամադրող կազմակերպություններ կատարում է նախարարությունը:</p> <p>Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների սոցիալական պաշտպանությանն ուղղված ցերեկային հոգածության կենտրոնները երեխային և նրա ընտանիքին տրամադրելով մասնագիտական ծառայություններ, առավելագույնս կանխարգելում են ռիսկի խմբի երեխաների հոսքը շուրջօրյա խնամքի հաստատություններ:</p> <p>Նախագծով կարգավորվում է նաև ցերեկային խնամքի կենտրոն երեխայի ընդունելությունը և խնամքի տրամադրման պայմանները:</p>
3.	<p><b>Կարգավորման նպատակը և բնույթը</b></p>
	<p>Նպատակն է մեկ միասնական կարգում կանոնակարգել և տարեցների ու հաշմանդամություն ունեցող անձանց, և երեխաների խնամքի տրամադրման գործընթացը: Գործող կարգերի համեմատ սույն նախագիծը ավելի մանրամասն ու հստակ է սահմանում խնամք տրամադրելու համար դիմելու կարգը՝ միասնական ընդունարանների ստեղծման լույսի ներքո, հստակ սահմանում է խնամքի տրամադրման մասին որոշում կայացնելը, խնամքի ձևերն ու տեսակները, տրամադրող հաստատությունների տիպերը, տարբեր կազմակերպությունների լիազորությունները, տեղեկատվության փոխանակման կարգը, միաժամանակ՝ սույն նախագծում ավելացվել է նոր բաժին՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններին և սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններին ներկայացվող ընդհանուր պահանջները, բացի այդ նախատեսվել է ներդնել սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների հավաստագրման ինստիտուտ:</p>
4.	<p><b>Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք</b></p>
	<p>Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և</p>

	սոցիալական հարցերի նախարարության կողմից:
<b>5.</b>	<b>Ակնկալվող արդյունքը</b>
	Սույն նախագծի ընդունումը համահունչ է «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներն: Արդյունքը՝ օրենսդրական դաշտի կատարելագործումն է և երեխաների, տարեց ու հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության հաստատություններում տրամադրվող խնամքի և սոցիալական ծառայությունների որակի բարձրացումն է:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ  
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ  
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՆՈՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ  
ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու կամ նոր իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտություն չկա:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ  
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՏՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ  
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Որոշման ընդունման կապակցությամբ պետական բյուջեում ծախսերի և եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում